

3olo cđ.
E-45
16818

ՄԱԿԱՐ
ԵԿՄԱՆՅԱՆ

ԽՄԲԵՐԳԵՐ
ԵՎ
ՄԵՆԵՐԳԵՐ



Հայաստան




W. H. S. Jones

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ ա կ ա թ Ե կ մ ա շ յ ա ն

ԽՄԲԵՐԳԵՐ ԵՎ ՄԵՆԵՐԳԵՐ

Կազմեցին՝ Շ. ՏԱՆՅԱՆ, Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ռ. ԱԹԱՅԱՆ
Խմբագրություն Ռ. ԱԹԱՅԱՆԻ



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

16818
81891

МАКАР ЕКМАЛЯН

9—3—4 ХОРОВЫЕ И СОЛЬНЫЕ ПЕСНИ

(На армянском языке)

Издательство «Айастан», Ереван, 1970 г.

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ականավոր կոմպոզիտոր Մակար Եկմայանի ստեղծագործության նըկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներին գնալով մեծանում է: Վճռական դեր խաղաց մինչսովետական շրջանի հայկական երաժշտությունը եռանդուն պրոպագանդող, Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Շարա Տայանի նախաձեռնությունը. 1961 թվականին նա Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտում Եկմայանի աշխարհիկ ստեղծագործությունների տպագրության հարցն առաջ քաշեց և ինստիտուտի հանձնարարությամբ ու երաժշտագետ Մաթևոս Մուրադյանի աշխատակցությամբ կապմեց կոմպոզիտորի աշխարհիկ ստեղծագործությունների մի ժողովածու: 1963 թ. հունիսի 2-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում Տայանը կապմակերպեց Եկմայանի աշխարհիկ գործերին նվիրված համերգ, որի ծրագիրը կապմված էր հիշյալ ժողովածուի նյութերից: Համերգը մեծ հաջողություն գտավ:

1965-ին տպագրության ներկայացված ժողովածուն հետագայում զգալիորեն հարստացվեց Եկմայանի մի շարք այլ ստեղծագործություններով, մասնավորապես՝ գյուղական երգերի մշակումներով, որոնք մանրակրկիտ հետազոտությամբ նրա արխիվում հայտնաբերեց երաժշտագետ Ռոբերտ Աթայանը (այդ երգերն են՝ № № 1—17, 19, 21, 23, 29—31, 40, ինչպես նաև № 32 և 43 երգերի ուշ գրված, համեմատաբար ավելի կատարյալ տարբերակները): Մրանցից 19 խմբերգ առաջին անգամ հնչեցին 1967 թ. նոյեմբերի 2-ին Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի դահլիճում Ռ. Աթայանի ղեկավարությամբ կայացած համերգին և նույնպես մեծ հաջողություն գտան:

Հրատարակվող ժողովածուն պարունակում է 48 խմբերգ և մեներգ, որոնցից 45-ը առաջին անգամ են տպագրվում (№ 33, 34 և 48 նախապես տպագրվել են պարբերական մամուլում): Ներկա հրատարակությունը գիտա-պատմական և կատարողական էական նշանակություն ունի: Ժողովածուն զգալի կերպով հարստացնում է Մակար Եկմայանի ստեղծագործության վերաբերյալ եղած սյառկերացումը, հատկապես գյուղական երգերի բաժինը կարևոր լրացում է հայ դասական երաժշտության ժառանգության մեջ:

Ն Մ Բ Ա Գ Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Մակար Եկմալյանի աշխարհիկ ստեղծագործությունների այս ժողովածուն ընդգրկում է հայ ժողովրդական երգերի մշակումներ և ինքնուրույն հորինումներ:

Ժողովրդական երգի մշակումը այն ժանրն էր, որ առանձնապես մեծ նշանակություն ունեցավ հայկական նոր պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման համար: Անցյալ դարի վերջին քառորդի և այս դարասկզբի մի շարք նշանավոր հայ երաժիշտներ գիտակցված կերպով իրենց ստեղծագործական եռանդի խոշոր բաժինը հատկացնելով ժողովրդական երգերի մշակմանը, դրանով պրոֆեսիոնալ երաժշտության մեջ ներդրեցին ազգային-ժողովրդական ցայտուն հատկանիշներով օժտված երաժշտական լեզու, իրականացրին հայ ժողովրդական մելոսը եվրոպական բազմաձայն երաժշտության ձևերին հաղորդակցելու պատմականորեն կարևոր խնդիրը, ստեղծեցին գեղարվեստական անվաղամեռ արժեքներ: Ժողովրդական երգի մշակման ժանրը մինչև օրս էլ նշանակալից տեղ է գրավում կոմպոզիտորական արվեստում և ժողովրդի առօրյա երաժշտական կենցաղում:

Եկմալյանի այս մշակումներում հայ ժողովրդական երաժշտությունը ներկայացված է իր տարբեր բնագավառների նմուշներով:

Մեծ մասն են կազմում *գյուղական* երգերի մշակումները, որոնք թեմայով և բնույթով բազմազան են (սիրո տխուր և ուրախ երգեր, կատակերգեր, սոցիալական թեմա ունեցող, ծիսական, պատմական, վիպական երգեր, բնության երևույթներ և այլն), մեղեդիները թեև ոչ ծավալուն, բայց ընտրովի գեղեցիկ և ոճով՝ բնութագրական: Կան նաև *քաղաքային* ժողովրդական մի քանի երգերի մշակումներ. երգեր, որոնք իրենց լադա-ինտոնացիայով ըստ ամենայնի հետաքրքրական են և ներկայումս տարածված նույն եղանակներից տարբեր: Չորս օրինակով ներկայացված են հայ *գուսանական* ք-

տեղծագործություններ: Եկմալյանը առաջին կոմպոզիտորներից էր, որ նկատեց գուսանական երգը գեղարվեստական հարդարման նյութ դարձնելու հնարավորությունը, այս դեպքում ևս նրա ձայնագրած և մշակած տարբերակները զանազանվում են ներկայումս հայտնի տարբերակներից: Ժողովածուում գտնում ենք նաև հայկական *տաղային* արվեստի աշխարհիկ ճյուղի ուշ միջնադարի լավագույն նմուշներից մեկի՝ Պետրոս Ղափանցու «Առավոտյան քաղցր և անուշ հովերն» տաղի մշակումը (ձեռագրերում կա նաև Պաղտասար Ղափրի «Ի ննջմանեղ. արքայական» տաղի մշակումը, դժբախտաբար՝ ուրվագծային վիճակում): Վերջապես, ըզգալի տեղ են բռնում *ազգային-հայրենասիրական երգերը* (մի քանիսը Եկմալյանի ինքնուրույն հեղինակություններն են), որոնք հանդիսանում են անցյալ դարի հայ ազգային-ազատագրական շարժման անմիջական անդրադարձումը Եկմալյանի ստեղծագործության մեջ:

Հայկական երգի մշակման այս բազմատեսակ նմուշները միասին վերցրած՝ բավական ընդարձակ պատկերացում են տալիս Եկմալյանի ստեղծագործական հետաքրքրությունների մասին: Դրանց կողքին միջնադարյան հայ հոգևոր երաժշտության բընագավառում կոմպոզիտորի խոր հետաքրքրությունն էլ հաշվի առնելով («Պատարագ»-ի ներդաշնակումը), պարզ երևում է նրա հանդես բերած շահագրգռվածությունը հայ ազգային երգի *ստեղծական* ժառանգության նկատմամբ: Այս փաստն առավելապես արժեքավորում է Եկմալյանի ստեղծագործական ու հասարակական կերպարը:

Եկմալյանի ձեռագրերի ուսումնասիրությունից երևում է՝ հայ ժողովրդական երաժշտության տարբեր ճյուղերի գեղարվեստական ընկալման մեջ նա որոշակի էվոլյուցիա է ապրել: Ինչպես Կարա-Մուրզան, Եկմալյանը նույնպես սկզբում ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես քաղաքային-ժողո-

վըրդական և ազգային-հայրենասիրական երգերի վրա, միայն հետագայում է «մոտիկից» զբաղվել հայ ժողովրդական երաժշտության առավել ինքնատիպ ճյուղի՝ գյուղական երգի մշակումով: Այս բանում, ըստ երևույթի, որոշակի նշանակություն է ունեցել Եկմալյանի հանդիպումը երիտասարդ Կոմիտասի հետ (1895 թ.) ու նրանց թեկուզ և կարճատև համագործակցությունը: Ջանազան բնագրերի համադրումից հաստատվում է, որ Կոմիտասը Եկմալյանին է տրամադրել իր ձայնագրած 23 գյուղական երգեր Գրականության և արվեստի թանգարանի Եկմալյանի ֆոնդ, ձեռ. նո. 21, էջ 1—5ա, տե՛ս «Կոմիտասական» ժողովածու, 1969, էջ 24):

Ջարգացման որոշակի ընթացք տեղի է ունեցել նաև երգերը մշակելու, մասնավորապես՝ ներդաշնակման արվեստում, ընդ որում, այս բանում էլ էական դեր կատարել է նույն՝ գյուղական երգը (ներառյալ կոմիտասյան ձայնագրությունները) ստեղծագործական մշակման նյութ դարձնելը: Գեղարվեստական նոր պահանջներ առաջադրելով, դա նոր ուղղություն է տվել կոմպոզիտորի մտածելակերպին, նպաստել նրա ոճի կատարելագործմանն ու բյուրեղացմանը:

Այսպես, եթե ընդհանուր առմամբ վաղ շրջանի պատկանող, քաղաքային երաժշտության հետ կապված նմուշների, ինչպես նաև քաղաքում կենցաղավարած մի քանի գյուղական երգերի մշակումներում Եկմալյանի ներդաշնակությունը սահմանափակվում է եվրոպական հարմոնիայի *ավանդական* միջոցների օգտագործումով և այդպիսի դեպքում երգի ընդհանուր գեղարվեստականությունը ստեղծելու մեջ համեմատաբար փոքր դեր է կատարում, ապա, ուշ կատարված գյուղական երգերի մշակումներում ներդաշնակությունը համեմատաբար *ինքնատիպ* է և՛ արտահայտչական ավելի մեծ դեր է ստանձնում:

Կարելի է թվել ներդաշնակման մի քանի միջոցներ, որոնք մասնավորապես հատուկ են ուշ մշակված գյուղական և մի քանի ուրիշ երգերին:

Դրանցից են՝ եվրոպական դասական հարմոնիայում անընդունելի, քայքայ ժողովրդական մոնոդիային հարմարվող առանց տերցիայի ակորդների գործածությունը կադանսներում (երբեմն էլ՝ կանոնցվածքի միջոցով). եվրոպական դասական հարմոնիայի «հիմնաքարը» կազմող դոմինանտ-սեպտակորդից խոսատիում, ընդհանրապես դիսոնանսների խիստ սակավ գործածություն, քրոմատիզմի խսկառ բացակայություն (ժողովրդական մեղեդիի մեջ գտնվող զարտուղությունները ներդաշնակված են բացառապես դիատոն միջոցներով, օրինակ՝ բնական դոմինանտով). պլազալ դարձվածքների և կարանսների նախասիրություն, որոնք, ինչպես

հետագայում, օրինակ՝ Կոմիտասի երկերում հաստատվեց, ավելի էին հարմարում ժողովրդական լադա-մեղեդիական ոճին, քան ավտենտիկ դարձվածքներն ու կադանսները. լադի երկրորդական կոչվող աստիճանների ակորդների ազատ օգտագործում, ձայնառության (ձգվող ձայների) առատ կիրառում և այլն:

Հոմոֆոն կերտվածքում ներդաշնակության արտահայտչականությունը մեծացնող կարևոր գործոն է հակադրության (կոնտրաստային) պոլիֆոնիայի տարրերի օգտագործումը: Եկմալյանի գյուղական երգերում ակնհայտ է հյուսվածքի միջին ձայների մեղեդիականացման ձգտումը (գեղեցիկ է, օրինակ, «Ղարիբ էս» երգի 1-ին նախադասության 3-րդ ձայնը): Ճիշտ է, սրանք դեռևս լիովին ինքնուրույն ձայներ չեն, քայքայ երևույթն ինքը հակադրման պոլիֆոնիայի հետ շոշափման որոշ կետեր ունի: Ուշ մշակումներում նաև նմանեցման (իմիտացիոն) պոլիֆոնիայի փորձեր է արել, հետաքրքրական են *կանոնական* նմանեցման օրինակները «Բելլով աղջիկ», «Կիլիկիա» և մի քանի այլ երգերում:

Բնութագրական է՝ այս բոլոր միջոցները գործածված են համեստորեն, զուսպ, մի յուրահատուկ ինքնասահմանափակումով, որը սակայն, ոչ միայն բացասական արդյունքի չի բերել, այլ ներդաշնակությանը (և հետևաբար՝ երգին) մի իմաստավորված պարզություն, ողջախոհություն է հաղորդել (նման զգայություն անդրադարձված է նաև «Պատարագ»-ի որոշ էջերի ներդաշնակման մեջ): Այս առանձնահատկությունը նույնպես կապված է հայ գյուղական երգի հետ, բխում է նրա ոճը ճշտորեն ընկալելուց: Այսպիսով, գյուղական երգերի մշակման մեջ առավելապես ցայտուն են արտահայտվել Եկմալյանի ստեղծագործական նվաճումները: Նրա մշակված այդ երգերից շատերը ներկայանում են որպես հոմոֆոն ոճի *դասական*՝ գեղարվեստորեն պարզ ու գրավիչ, և խորապես բովանդակալի նըմուշներ:

Այս հանգամանքն, անշուշտ, չի նսեմացնում ժողովածուում գետեղված մյուս երգերի արժանավորությունը, որոնք ընտրված են ոչ միայն պատմական, այլև գեղարվեստական արժեքավորության տեսակետից:



Ներկա ժողովածուի երգերի, և հատկապես գյուղական երգերի մի զգալի մասը վերծանված է չըխմբագրված սևագրերից, որոնցում հաճախ նշված չէ՝ երգի թե նվագի են հատկացված, չկան երգչախմբի ձայնանունները, երբեմն խոսքերը գրված չեն, միայն առաջին տողն է կամ վերնագիրը, երանգագծիչներ և տեմպի ցուցիչներ չկան: Այսպիսի

խմբագրական թերթայինների պատճառով այդ նյութերը մինչև վերջերս համարվում էին տպագրության և կատարման համար ոչ պիտանի ուրվագծեր: Մոտիկ ծանոթացումը, սակայն ցույց տրվեց, որ դրանք բուն երաժշտական շարադրության տեսակետից ավարտված մշակումներ են և խմբագրական թերթայիններով հանդերձ, անվիճելի գեղարվեստական արժեք ունեն: Ժողովածուի մեջ ընդգրկելու համար հայտնաբերված, ցուցակագրված և համեմատված են միևնույն երգի ներդաշնակման հաճախ մեծաթիվ տարբերակներ, որոնցից ընտրված է լավագույնը, ավարտվածը: Կատարված են խմբագրական շտկումներ և բացառիկ անհրաժեշտ ճանաչված լրացումներ:

Քառաձայն խմբերգերից շատերը բնագրերում շարադրված են երկտող՝ «կլավիրի» ձևով, և այն դեպքում, երբ ձայների նշումներն ու խոսքերն էլ չկան, սխալ տպավորություն է ստացվում, իբր դրանք հատկացված են դաշնամուրի կամ գործիքային որևէ անսամբլի նվագի: Երբեմն, սակայն, անկախ շարադրության եղանակից, դաշնակումը հավասարապես կարող է համարվել թե՛ երգի, թե՛ նվագի հատկացված: Բոլոր այն դեպքերում, երբ բնագրում նշված չէ կատարողական կազմը, խմբագիրն այս կամ այն կազմին հատկացնելու համար գտել է բավականաչափ հիմնավոր տվյալներ: «Մեռնի սաբլբի որդին» և «Ճախարակ» երգերը, թեև բնագրում ավելի շուտ դաշնամուրային պիեսներ կարող են համարվել, քան խմբերգեր, այնուամենայնիվ, նկատի ունենալով դրանց ընդհանուր ցայտուն երգայնությունը, խմբագիրը, լիովին պահպանելով բնագրերի երաժշտական բովանդակությունը, ժողովածուում դրանք ներկայացրել է որպես խմբերգ:

Բնագրերի համեմատությունից երևում է՝ հաճախ մեղեդիները սկզբնապես գրի առնվել ու ներդաշնակվել են «պայմանական» կամ պատահական տոնայնության մեջ, դեռևս առանց հաշվի առնելու երգչախմբի այս կամ այն կազմի համար հարմար կամ անհարմար լինելու հանգամանքը: Վերջնականորեն չխմբագրված մի շարք երգեր, որոնք այդպես էլ մնացել են կատարման համար անհարմար տոնայնություններում, հատորում փոխադրված են հարմար տոնայնություն:

Խմբագրական աշխատանքի մի կարևոր մասը կազմել է գյուղական երգերի խոսքերի վերականգնումը:

Խոսքը երգի կարևոր բաղկացուցիչներից մեկն է և նույնքան, որքան մեղեդին ու դաշնակը, արտահայտում է հեղինակի մտահղացումն ու ստեղծագործական աշխատանքը: Խոսքերի մեջ որևէ միջամտություն նույնքան անթույլատրելի է, որքան

անընդունելի է երաժշտական միջամտությունը: Բայց, ունեցել է արդյոք Եկմապյանը այդ երգերի մշակված խոսքերը, դժվար է պնդել: Հաստատապես, սակայն, կարելի է պնդել՝ այն դեպքը չէ, երբ խոսքերը, հավասարապես նաև տեմպի ցուցիչները և երանգագիշերը թերի լինելու կամ բնավ գրված չլինելու պատճառով, չմիջամտելու կանոնով առաջնորդվելով, պետք է ընդհանրապես հրաժարվել երաժշտական ակնառու արժեք ունեցող երգերից:

Գյուղական երգի մշակումներում խոսքերը լրացվել կամ վերականգնվել են հետևյալ մոտեցումով. ուղեցույց ունենալով բնագրերում եղած վերնագիրը, բանաստեղծության սկզբի տողը կամ տունը և կամ միայն եղանակը, ժողովրդական երգերի ձեռագիր կամ տպագիր զանազան ժողովածուներում փնտրելով, խմբագիրը գտել է բանաստեղծական նույն տող կամ նույն եղանակը, ունեցող երգի տարբերակներ, և նրանց խոսքերը համեմատելով, անշուշտ օգտադրածելով նաև Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղիկներ»-ը և «Հազար ու մի խաղ»-ը, խմբագրելով ամբողջացրել կամ վերականգնել է դրանք: Բարբառախառն լեզուն և այդ տեսակետից բնորոշ արտահայտությունները, քանի որ հեղինակի հատ ու կենտ բնագրերում կան, այստեղ էլ պահպանված են: Վերականգնած խոսքերով երգերն ըստուգվել են երգչախմբում, որտեղ ստուգվել է նաև խմբագրի նշանակած տեմպերի և կատարողական երանգների գեղարվեստական արդարացվածությունը:

Ընդհանուր հումֆոն կերտվածքում երգչախմբի բոլոր ձայները երգերի մեծ մասում զուգահեռաբար միևնույն խոսքերով են երգվում: Այն դեպքերում, երբ ձայների մեջ խոսքերի տարբերություն կա, երկրորդ և հաջորդ տների համար այդպիսի ձայների խոսքերն ըստ անհրաժեշտության բերված են ծանոթագրություններում:

Չնայած նրան, որ երգերի կառուցվածքը տունատուն է, հասկանալի է՝ պետք չէ 1-ին տան համար դրված երանգագիշերը մեքենայորեն կրկնել երգվելիք բոլոր տներում: Խոսքի բովանդակությունից (մտքի զարգացումից) ելնելով, կատարողները կարող են թե՛ տեմպը, թե՛ կատարման այլ մանրամասները հաջորդ տներում այս կամ այն չափով տարբերակել: Օրինակ, «Ճախարակ» երգի մեկնաբանման հնարավոր ձևերից մեկը կարող է լինել այսպես. 1-ին տունը՝ հանդարտ ու մեղմ, 2-րդ և 3-րդ տները առաջին կեսերում արագացված, հուզումնալից, վերջին 4-րդ տունը 1-ից փոքր-ինչ ավելի դանդաղ, միակար շեշտված վանկերով փափուկ շեշտաչափելով, առանց կրկնության, ձայնը մարելով (այսպիսի մեկնաբանումով «Ճախարակ»-ը հնչել է առաջին կատարմանը):

ժողովածուում երգերը դասավորված են հետևյալ սկզբունքով. սկզբից դրված են գյուղական երգերի երգչախմբային մշակումները, որոնք ժողովածուի բովանդակության և երաժշտական ոճի հիմնական կրողներն են, դրանց մեջ ներառված են նաև գուսանական երգերը, որոնք իրենց ոճական հատկանիշներով տվյալ դեպքում շատ հեռու չեն գյուղականներից, ապա զետեղված են ազգային-հայրենասիրական երգերը և վերջում դաշնամուրի նվագակցությամբ քաղաքային նմուշների մեներգային մշակումները:

Գյուղական երգերը փոքրածավալ են: Ինչպես հայտնի է, Կարա-Մուրզան և Կոմիտասը այդպիսի փոքրածավալ երգերը կատարելիս, մի քանի երգ միակցել են: Նույն հնարավորությունը կա այստեղ: Կատարողին որոշ ուղեցույց տալու նպատակով հատորի 1-ին վեստում խմբերգելը մեծ մասամբ դասավորված են զույգ-զույգ միակցվող, դանդաղ և արագ երգերի հաջորդականությամբ և այդ մասին ծանոթագրություններում արված են դիտողություններ: Անշուշտ, հնարավոր է կազմել այլ զույգեր, եռյակներ, քառյակներ: № № 38—43 երգերը, որ ժամանակին, Եկմալյանի ղեկավարությամբ հնչել են արդեն որպես մի երգաշար, այստեղ զետեղված են նույն հաջորդականությամբ և կարող են կատարվել այնպես, ինչպես հեղինակն ինքը կատարել է*: Այդ երգերից ամեն մեկը երգվել է այնքան խոսքերով, որքան գրված է նոտաների տակ: Հավելյալ տները կարող են պետք գալ, երբ երգերը առանձին-առանձին կատարվեն:

Չի կարելի վատահամալ, որ այս հատորով եզրափակվում են Եկմալյանի մշակած կամ ստեղծած աշխարհիկ Դեներգներն ու խմբերգերը: Մամուլում

* Երգաչարի ձևը հայ երաժշտության մեջ այն ժամանակներից սկսած բավական տարածված է եղել: Հայկական վոկալ կամ գործիքային նման շարեր ստեղծել են նաև Կովկասում աշխատած ռուս կոմպոզիտորներ Կլեմովսկին, Կազաեմկոն, Իպպոլիտով-Իվանովը: Եկմալյանի այս շարերգը հայկական խմբական շարերգերի առաջին նմուշներից է: Տե՛ս այդ երգերի ծանոթագրությունը:

զետեղված հատկապես հին հողվածներու, հիշատակվում են այլ անուններ ևս: Թեև տվյալները ոչ մասնագետների լինելով, միշտ չէ, որ վատահեղի են (երբեմն խառնված են ծայնագրել և մշակել հասկացությունները, ժողովրդական լսելով մեծ մասամբ հասկացել են ազգային-հայրենասիրական երգերը, պարզապես նաև շփոթված ան երգերի անունները), այնուամենայնիվ պետք է շարունակել փնտրել Եկմալյանի ձեռագրերը: Աղբյուր կարող են դառնալ նաև նրա աշակերտների, ընդհանրապես հայ կոմպոզիտորների, երաժիշտների, խմբավարների արխիվները: Անշուշտ, պահանջվում է զգուշ մոտեցում, որպեսզի բնագրերն աղավաղված չլինեն (այդպիսին են, մասնավորապես, Եկմալյանին աշակերտած կոմպոզիտոր Ազատ Մանուկյանի արտագրությունները) կամ Եկմալյանին չվերագրվեն այլ հեղինակների գործեր (այսպես, օրինակ, արխիվում պահվող, Շարա Տալյանի ձեռքով արտագրված «Յար ջան, մերդ մեռել է» երգի մշակումը մամուլում սխալմամբ է վերագրված Եկմալյանին):

Անկախ դրանից, բավականաչափ ճաշակավոր և ազգային ոճի տեսակետից մաքուր չլինելու նկատառումով, սույն ժողովածուի մեջ չի մտցված Եկմալյանի դաշնակած «Հանգիստ իմ անուշ» երգը, չեն մտցված նաև «Մեր ազգ հավածված» խմբերգը և ուսանողական շրջանի մի շարք գործեր, որոնք միայն կոմպոզիտորի ստեղծագործական կենսագրության տեսակետից, այն էլ նեղ հետաքրքրակառույցում ունեն, և «Ռոզայի թափառումները» ուսանողական կանտատո, որից պահպանված հատվածը որևէ չափով ամբողջական տպավորություն չի ստեղծում:

ժողովածուում զետեղված երգերի բնագրերի, նրանց հետ կապված խմբագրական աշխատանքի և զանազան այլ հարցերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կան հատորի ծանոթագրություններում:

Ռ. ԱԹԱՅԱՆ

Մ Ա Կ Ա Ր Ե Կ Մ Ա Լ Յ Ա Ն

Կենսագրական ակնարկ

19-րդ դարի վերջին քառորդի երաժշտական գործիչների թվում եկամալանը գրավում է առավել տեղ: Նա առաջին հայ կոմպոզիտորն էր, որ ավարտելով Պետերբուրգի կոնսերվատորիայի լրիվ դասընթացը, զինվել էր Ազատ արվեստագետի դիպլոմով և իր ստացած գիտելիքները ծառայեցնում էր հայրենի երաժշտական, ստեղծագործության պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը:

Մակար եկամալանը ծնվել ու մեծացել է Կաղարշապատում: Իր ծննդյան օրից՝ 1856 թ. հունվարի 21-ից (փետրվարի 2-ից) մինչև Պետերբուրգի կոնսերվատորիան մեկնելը (1878) նա մշտապես եղել է Էջմիածնում, սովորել է տեղի ժառանգավորաց դպրոցում, մասնակցել եկեղեցական երգեցողությանը, տեսել ու լսել է կրոնական տոնախմբությունների և ուստազնացության եկած բազմահազար ժողովրդի պարերն ու երգերը՝ այդ ամենից իր հոգում կուտակելով երաժշտական բազմապիսի տպավորություններ: Այստեղ է ձեռք բերել նա նաև իր երաժշտական նախնական պատրաստությունը՝ լինելով Ն. Թաշչյանի ամենաընդունակ աշակերտներից և օգնականներից մեկը, հետևապես հայկական ձայնահիշերով (Լիմոնջյանի սիստեմ) շարականները ձայնագրելու և հրատարակելու գործում: Այս հանգամանքը վճռական նշանակություն ունեցավ նրա ապագա գործունեության ուղղության որոշման տեսակետից: Գևորգ Դ. կաթողիկոսը հանձինս եկամալանի տեսավ այն մարդուն, որը պետք է կարգավորեր ու վերամշակեր հայկական եկեղեցու ավանդական եղանակները: Այս նկատի ուներ նա, երբ 1878 թվին եկամալանին ուղարկեց Պետերբուրգ, որպեսզի ձեռք բերի երաժշտական կրթություն:

Պետերբուրգի կոնսերվատորիայում եկամալանն ստիպված էր հաղթահարել շատ դժվարություններ ու արգելքներ, շուրջ տաս տարվա ընթացքում անց-

նել տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսման փուլերը, աշակերտել ողա հռչակավիր երաժիշտ-դասատուների, ծանոթանալ համաշխարհային երաժշտության գանձերին, ձեռք բերել երաժշտական-տեսական պատրաստություն ու կոմպոզիտորական հմտություն և ըստ ամենայնի զինված վերադառնալ հայրենիք ու ծառայել հայրենի երաժշտությանը:

1891 թվից եկամալանը հրավիրվեց Թիֆլիսի Սերսիսյան հոգևոր դպրոցը, որպես երաժշտության դասատու և խմբավար: Այստեղ նա լուրջ հիմքերի վրա դրեց երաժշտության դասավանդման գործը, հայկական ձայնահիշերից բացի աշակերտներին սովորեցրեց եվրոպական նոտագրություն, համար ու համբերատար աշխատանքով տեղծեց մի երգչախումբ, որն այժի էր ընկնում իր կատարողական արվեստի բարձր մակարդակով: Երաժշտական արտակարգ ընդունակություն ունեցող աշակերտներից նա պատրաստեց խմբավարներ, որոնք եկեղեցական երգեցողության ընթացքում փոխարինում էին իրեն: Նա դաստիարակեց բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերը հետագայում դարձան նշանավոր երաժիշտներ: Դրանցից են՝ Տիգրան Նալբանդյանը, Արմենակ Շահմուրադյանը, Մուշեղ Աղայանը, Արամ Տեր-Հովհաննիսյանը, Ազատ Մանուկյանը: Անտոն Մայիլյանը և շատ ուրիշներ: Բեռլին մեկնելուց առաջ նրան աշակերտել է նաև Կոմիտասը:

Ստեղծագործական աշխատանքի գծով եկամալանը դեռ ուսանողական տարիներին ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդական ու հոգևոր երգերի ձայնագրմանն ու մշակմանը: Նշանակալից է նրա դիպլոմային աշխատանքը, որով նա ավարտեց Պետերբուրգի կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը: Այն կոչվում է «Ողբայի թափառումները»: Դա ծավալուն մի կանտատա է, գրված սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մեներգիչների համար

և առաջին անգամ հեղինակի ղեկավարությամբ կատարվել է 1888 թվի մայիսի 28-ին՝ ավարտական ցերեկույթի ընթացքում: Իր թեմայով այն կապված չէր հայ իրականության հետ և երաժշտությանն ոճով նույնպես հեռու էր հայկականից: Բայց միաժամանակ դա առաջին վոկալ-սիմֆոնիկ ծավալուն ստեղծագործությունն էր, գրված հայ կոմպոզիտորի ձեռքով: Դժբախտաբար այդ կանտատայից մեզ հասել է սկզբի մի քանի էջը միայն և դժվար է դրանց հիման վրա գնահատել ամբողջ գործը:

Նրա գրչին է պատկանում դաշնամուրային նուրբ տյուրներ, որը լույս է տեսել 1892 թվին և հանդիսանում է հայ դաշնամուրային ստեղծագործության առաջին շրջանի աչքի ընկնող գործերից մեկը: Դա մի հետաքրքրական փորձ էր Շոպենյան տրադիցիայի յուրացման ուղղությամբ:

Ուսանողական տարիներից սկսած շուրջ տաս տարի եկամյալան աշխատեց պատարագի երգեցողության բազմաձայն մշակման ուղղությամբ: Իբրև հիմք ընդունելով այն եղանակները, որոնք հայկական ձայնաձևերով ձայնագրված ու հրատարակված էին Ն. Թաշչյանի կողմից, եկամյալանը հաճախ դրանք համեմատում էր տարբեր եկեղեցիներում իր լսած եղանակների հետ, գրի առնում նոր տարբերակներ ու ճշտում նախորդներում եղած վրիպումները: Եկամյալան առանձին նշանակություն էր տալիս այս գործին: Այդ է վկայում նաև այն, որ 1893 թվին ավարտելով ամբողջ պատարագի եռաձայն ու քառաձայն մշակումները, նա նույն թվի հունվարին մեկնեց Պետերբուրգ, ներկայացրեց այն կոմսերվատորիայի և Պալատական կապելլայի խորհուրդների քննությանը՝ արժանանալով ինչպես այդ խորհուրդների, նույնպես և անվանի ռուս կոմպոզիտորներ Մ. Ա. Բալակովի և Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի բարձր գնահատականին:

Վերադառնալով Թիֆլիս, նա եռանդով սկսեց պարսպել Ներսիսյան դպրոցի երգչախմբի հետ և սովորեցնել քառաձայն պատարագի առանձին հատվածները, որոնք առաջին անգամ հնչեցին Թիֆլիսի վանքի մայր եկեղեցում և արժանացան հասարակության միահամուռ հովանությանը: Փորձը հաջողությամբ պատկավելուց հետո, եկամյալանի դիմումի հիման վրա, կաթողիկոս Խրիմյանը հատուկ կոնդակով օրհնեց բազմաձայն պատարագի հեղինակին և նրա պատարագը օրհնականացնելով՝ թույլատրեց տպագրել ու տարածել ամենուրեք: 1896 թվին Լայպցիգում լույս տեսավ եկամյալանի պատարագը եռաձայն և քառաձայն (արական) և քառաձայն խառը խմբերի համար գրված վարիանտներով: Ծնորդիվ եկամյալանի, պատարագի

բազմաձայն երգեցողությունը հաղթանակեց նաև եկեղեցում, մի բան, որն անկասկած կարևոր նշանակություն ունեցավ հայկական երաժշտական կուլտուրայի հետագա զարգացման համար: Միայն այն, որ պատարագի կատարման համար սկսվում է շարժում հայասնակ վայրերում երգչախմբերի կազմակերպման ուղղությամբ, ինքնին շատ ցուցադրական է:

Եկամյալանը գերազանցապես հայտնի է որպես պատարագի երգեցողության բազմաձայն մշակման հեղինակ: Ճիշտ է, պատարագն իրոք եկամյալանի ամենածավալուն գործն է և օժտված է գեղարվեստական բարձր արժանիքներով, բայց չի կարելի դրանով սահմանափակել եկամյալանի ստեղծագործության արժեքը: Տրադիցիոն դարձած այդ միակողմանի մոտեցումը հետևանք է այն բանի, որ եկամյալանն իր ուժերի ծաղկման շրջանում 1902 թվին հոգեկան ծանր հիվանդություն ստանալուց և երեք տարի տառապելուց հետո, 1905 թվի մարտի 6-ին վախճանվեց՝ անախարտ թողնելով ստեղծագործական բազմաթիվ մտահղացումներ: Նույնիսկ այն գործերը, որոնք նա ավարտել էր, բայց որոնք մնացել էին ձեռագիր փճակում, նրա մահից հետո անհետ կորել են: Այն թուրք ինչ հաջողվել է փրկել կորստից և հավաքել եկամյալանի երևանյան արխիվում, փշրանքներ լինելով հանդերձ, վկայում են եկամյալանի լարված ու հետևողական ստեղծագործական աշխատանքի մասին: Իր նկատմամբ լինելով չափազանց խստապահանք, նա միևնույն գործին վերադարձել է բազմիցս՝ ստեղծելով նույն գործի մի քանի վարիանտ:

Հատկանշական է, որ իր ստեղծագործական կյանքի վերջին տարիներին եկամյալանն ավելի ու ավելի մոտ էր կանգնում ժողովրդական երաժշտությանը, ձայնագրում ու մշակում էր բազմաթիվ երգեր: Նրա սևագիր թղթերում հայտնաբերված ժողովրդական երգերի մշակումների պարզ թվարկությունն անգամ պատկառելի տպավորություն է գործում: Դրանց թվին են պատկանում «Անձրևն եկավ», «Գիշեր-ցերեկ», «Ձանգյուլում», «Չեմ կըրնա խաղալ», «Պաղ աղբրի մոտ», «Լուսնակն անուշ», «Համեստ աղջիկ», «Յոթն օր, յոթ գիշեր», «Քեզի մեռնեմ», «Սիրունիս, քեզ համար», «Աղջիկ դու սիրուն», «Բերդից դուս ելա», «Ուր-մուր», «Կուտ էր» և այլ երգեր: Եկամյալանի ձայնագրած ժողովրդական երգերը օժտված լինելով գեղարվեստական ուժով ու արտահայտչականությամբ և դիմանալով ժամանակի փորձությանը, պահպանվել ու փոխանցվել էին սերնդից-սերունդ: Եկամյալանն այդ երգերը մշակել է որպես մեներգ դաշնամուրի նվագակցությամբ, որպես խմբերգ առանց նվագակցության և որպես դաշնամուրային պիես: Բոլոր

դեպքերում էլ պահպանելով տվյալ երգի մեղեդին, նա աշխատել է տալ հարմոնիկ այնպիսի ներդաշնակությամբ, որպեսզի այն հնչի հարստացած ու թարմացած, օժտված լինի ոճական միասնությամբ և գեղարվեստական բարձր հատկանիշներով: Եկամայանը նույն նպատակներն է հետապնդել նաև այն երգերում ու ոտանավերում, որոնք նա գրել է հայ բանաստեղծների, հատկապես Ռ. Պատկանյանցի և Մ. Պեշիկթաշլյանի բանաստեղծությունների խոսքերով: Նրա այդ կարգի երգերից առանձնապես նշանակալից են՝ «Ոչ փող զարկիմք», «Լուեց. ամպերը եկան» և այլ երգերը: Դրանք օժտված լինելով մելոդիկ գեղեցկությամբ ու հարմոնիկ ներդաշնակությամբ, անկասկած, կարևոր դեր են կատարել հայ փոկալ ստեղծագործության զարգացման

մեջ և այսօր էլ պահպանել են իրենց գեղարվեստական արժեքը: Դրանց մեջ, ինչպես և ազգային-հայրենասիրական երգերի իր մշակումներում, Եկմայանը հանդես է բերել իր խորը մտահոգվածություներն ու շահագրգռվածությունը հարազատ ժողովրդի պատմական ճակատագրով, նրա ազգային ազատագրական պայքարով:

Սխալ է եկմայանին միակողմանիորեն ներկայացնել որպես հայ եկեղեցու գաղափարախոս: Նա միաժամանակ հանդիսացել է հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների անուհայտիչ և որպես այդպիսին գրավել է իր արժանավայել տեղը հայ երաժշտության պատմության մ'ջ:

ՄԱՐԹԿՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

1 ԱՐԱՋԸ ՀԵՃՏԱՅԵԼ Ա

Վշտահույզ
Con tristezza

♩ = 96

Soprani
Alti

Tenori
Bassi

Ա - ռա - զը հեշ - տա - ցել ա, վա՛յ, լե, լե.

լե, վա՛յ, ա - դե ջան, համ - փե - թը կոշ -

տա - ցել ա, յա՛ր, լե, լե, լե, վա՛յ, մայ - ռիկ ջան:

Արազը հեշտացել ա,
 Վա՛յ, լե, լե, լե,
 Վա՛յ, ադե ջան,
 Ճամփեքը կոշտացել ա,
 Յար, լե, լե, լե,
 Վա՛յ, մայրիկ ջան:

Խաբար տարեք իմ յարին,
 Վա՛յ, լե, լե, լե,
 Վա՛յ, ադե ջան,
 Դարդերս շատացել ա,
 Յար, լե, լե, լե,
 Վա՛յ, մայրիկ ջան:

Իմ սերը սուր ա դառել,
 Կրակ ու ջուր ա դառել,
 Յա՛ր, քեզ սրտով սիրելը
 Ինձ թուք ու մուր ա դառել:

Էլի գախ եմ իմացել,
 Աչքս ճամփիդ մնացել,
 Գիշեր-ցերեկ քեզ համար
 Միտք անելով եմ կացել:

Բախտը վարկեց սրտիս նետ,
 Արտասուքս եղավ գետ,
 Թե աստվածդ կսիրես,
 Յա՛ր, ինձ արի տա՛ր քեզ հետ:

2 ՍԻՐՈՒՆ Է

Հանդարտիկ
Andantino $\text{♩} = 64$

Սիրահույզ, փոքր-ինչ կատակելով
amorevole e poco scherzoso

S. 
 Յա՛ր, յա՛ր, Ա - ռա-զի խոր ա - դե - քը
 Կող- պա տո-լազ գյա-դե - քը

A. 
 Յա՛ր, յա՛ր, խոր ա - դե - քը
 Լազ գյա - դե - քը

T. 
 Սի-րո՛ւն է, սի-րու՛ն է, խոր ա - դե - քը
 Լազ գյա-դե - քը

B. 
 Սի-րո՛ւն է, սի-րու՛ն է, յա՛ր, յար ջան, dolce


 Երս - տել եմ այ - գի - ցե - ըն, ա - սում եմ Լավ դայ-դե - քը:


 Երս - տել եմ այ-գի - ցե - ըն, ա - սում եմ Լավ դայ-դե - քը:


 Երս - տել եմ այ-գի - ցե - ըն, ա - սում եմ Լավ դայ-դե - քը:



Սիրո՛ւն է, սիրո՛ւն է...

Արապի խոր արեքը
Կողպա տողապ գյաղեքը
Նստել են այգիները,
Ասում են լավ դայրեքը:

Ի՞նչ տնկի են՝ բար չունես,
Ի՞նչ ջահել են՝ յար չունես,
Երկնքի դուռ են դառել,
Իջնելու հնար չունես:

Մեծ կալը երես-երես,
Բապրոյա՛ն, ասովա՛ծ սիրես,
Բաշ-Շորագյալ գնալիս
Իմ յարը հետդ բերես:

Ապուր եմ եփել աղի,
Ուտողի սիրտը դաղի,
Ես ու նա իրար-սիրենք,
Թող թշնամին կատաղի:

3 ԲՈՅԿ ԲԱՐՉՐ

(Առաջ Միսեհին)

Հիացմունքով
Entusiastico $\text{♩} = 96$

S. *mf*
Բո - յոյ բար - ձըր սալ - բու, չի - ցար, աչ - քըր

A. *mf*
Բո - յոյ բար - ձըր չի - ցար, աչ - քըր

T. *p*
Յար, բո - յոյ չի - ցար,

ritardando

ten.

Սիրալիր
Amabile $\text{♩} = 69$

Gախ - շուհ, ուհ - քըր կա - մար, դու ստեղծ - վել 'ես'

Gախ - շուհ, ուհ - քըր կա - մար, դու ստեղծ - վել էս'

ten.

un poco rit.



իհ - ձի հա - մար, ահ - գիհ ծա - դիկ իմ, ցոր բու - սած:

իհ - ձի հա - մար, ահ - գիհ ծա - դիկ իմ, ցոր բու - սած:

Coda poco a poco accelerando e crescendo sempre

p

ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝ ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ

ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝ ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ

ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝ ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ

Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ. ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝

Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ. ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝

Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ. ԻՅձ - ԳուՄ Ե - Ղաժ՝

f

ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ:

ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ. Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ:

ԻՅձ Ի՞Գչ շահ Է. աՅ - գիՅ. Ժա - Ղիկ ԻՄ, Գոր բու - սաժ:

Բոյ՞ բարձր սալբու չինար,
Աչքո նախշուն, ունքո կամար,
Դու ստեղծվել ես ինձի համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:


Գույնդ նման է մարմարի,
Հագի շորերդ հարմարի,
Դու ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Գիշեր-ցերեկ նստած լալով,
Արյուն-արտասուք թափելով,
Ինձ թողել ես չարչարվելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսները ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ, տամ քեզ պահե,
Ինձնում եղած՝ ինձ ի՞նչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

4 ԱՂՋԻԿ ՆԱԶԵՐՈՎ

Լայնաշունչ
Largo
p



I
Tenn. Աղ-ջիկ ցա-զե թով. թել-թել մա-զե - թով.

II
I Bassi Աղ-ջիկ ցա-զե - թով. թել-թել մա-զե - թով.

II


16818

pp
զե - թե-ցիր դու ինձ. ցա-զե-լի. հա-զար ցա-զե - թով:

pp
զե - թե - ցիր դու. յար:

pp
Յար. հա-զար ցա-զե - թով:

pp
զե - թե - ցիր դու ինձ. ցա-զե-լի յար:



mf con affetto *molto cresc.* *div.* *poco allarg.* *a tempo* *dim.*

Ախ, իմ սիրե - կան, ինչո՞ւ հե - ու - ցար.

Ախ, իմ սիրե - կան, ինչո՞ւ հե - ու - ցար.

p *pp*

քեզ ի՞նչ ա-րի, իմ գո-վե - լի, որ ինձ մո-ու - ցար:

քեզ ի՞նչ ա-րի, յա՛ր:

Յա՛ր, որ ինձ մո-ու - ցար:

քեզ ի՞նչ ա-րի, իմ գո-վե - լի, յա՛ր:

Աղջիկ նապերով,
Թեւթեւ մապերով,
Գերեցիր դու ինձ, նապելի,
Հապար նապերով:

Հագել ես այլ,
Գցել ես շալը,
Թառ բոյիդ մատաղ, սիրելի,
Սիրուն իմ յարը:

Ա՛խ, իմ սիրեկան,
Ինչո՞ւ հեռացար,
Քեզ ի՞նչ արի, իմ գովելի,
Որ ինձ մոռացար:

5 ԾԱՄԵՐՊ, ԾԱՄԵՐՊ (Առույ Թալալ)

Հուզումնալից
Patetico

♩ = 120
rubato

allargando

S.

Ծա-ռի վը-րա բաց-վել է կար-միր վար - դը.

A.

Ծա - ռի կար - միր վար - դը.

T.
B.

f a tempo

rubato

allargando

մարդ շը - գի - տի իմ վիզն ըն - կած սեվ դար - դը.

մարդ շը - գի - տի դար - դը.

♩ = 112

mp rubato

poco, allarg.

a tempo

ծա - մե - թող, ծա - մե թող, Շե - կո ջան.

ծա - մե - թող, ծա - մե թող, Շե - կո ջան.

ծա - մե - թող, ծա - մե թող, Շե - կո ջան.

poco allarg. *p a tempo* *ritardando*

մա - զե - ռըդ էդ քո հը - պարտ ուն - քե - ռըդ:

մա - զե - ռըդ էդ քո հը - պարտ ուն - քե - ռըդ:

մա - զե - ռըդ:

Ծառի վրա բացվել է կարմիր վարդը,
 Մարդ չգիտի իմ վիզն ընկած սև դարդը.
 Ծամերդ, ծամերդ,
 Շե՛կո ջան, ծամերդ,
 Էդ քո հպարտ ունքերդ:

Դու մի՛ պատիր ինձնից թանկագին սերդ,
 Ցույց տուր ինձ՝ պայմանով համարիր տերդ՝
 Ծամերդ, ծամերդ,
 Վառ կանթեղ աչքերդ,
 Էդ քո կամար ունքերդ:

Տ ԳՈ ՓԱՓԱԳՈՎ (Ձիվանի)

Աճձկալի
Con desiderio ♩ = 108

S.
A.

Քո փա-փա - գով վառ - վում եմ, ա - ըհ, սի-րա-կան, ո՛ւր - տեղ ես.

T.
B.

երկ- ցա - յից ամ - պե - - թու մեջ ցըս - տող ծի - ա - ծան, ո՛ւր - տեղ ես.

p

ճա - ճա - պար-հրդ ճա - յե լով աչ - քե - թու-մըս լույս շը - մը-ճաց.

եկ, ե - թե - վույթ տե - սա-ցեմ, ազ - ցիվ սի-րա - կան, ո՛ւր - տեղ ես.

p

Քո փափագով վառվում եմ, արի՛, սիրական, ո՞ւր
տեղ ես.

Երկնային ամպերու մեջ նստող ծիածան, ո՞ւր տեղ
ես:

Ճանապարհոյ նայելով աչքերումս լույս չմնաց,
Եկ, երևույթ տեսանեմ, ասնի՛վ սիրական, ո՞ւր տեղ
ես:

Ի՞նչ պատահավ, անուշիկ, որ դու հեռացար ին-
ձանից,
Քաղցրախոս, անուշ լեզու, անվամբ գովական, ո՞ւր
տեղ ես.

Քանի՞ մեկ, քանի՞ չարաչար տանջվիմ այլոց ձեռ-
քով,
Ով վեհապանծ անվանի, կյանքիս պահապան, ո՞ւր
տեղ ես:

Մեր սիրո վայելչական տեղերն ուրիշ մարդիկ
առան,

Դու արի միասին գնանք դատարան, ո՞ւր տեղ ես,
Թող միայն ասես, Ջիվան, այսօր սիրականդ կու
գա,

Թող տատանիմ քո սիրով մինչև հավիտյան, ո՞ւր
տեղ ես:

7 ԲԱՂԵՐ, ԴՈՒՔ ԿԱՆԱԶԵՑԵՔ

Դանդաղ, տխրագին
Adagio mesto $\text{♩} = 84$

S.
A. *p* *p*

Բա - ղեր, դուք կա - նա - շե - ցեք, իմ յա -

T. *p* *p*

Բա - ղեր, դուք կա - նա - շե - ցեք, իմ յա -

B. *pp* *pp*

Մա - ռալ, մա - ռալ, մա -

- ռից ճա - նա - շե - ցեք, ջան, մա - ռալ, ջան.

- ռից ճա - նա - շե - ցեք, ջան, ջան.

- ռալ, մա - ռալ, ջան, մա - ռալ, ջան.

իմ յա - ռից ճա - նա - շե - ցեք, վա՛յ, լե, լե.

վա՛յ.

իմ յա - ռից ճա - նա - շե - ցեք, վա՛յ, լե, լե.

լե. լե. վա՛յ, լե. լե. լե. վա՛յ, լե. լե.

լե:

լե. լե. վա՛յ, լե. լե. լե. վա՛յ, լե. լե.

Բաղե՛ր, դուք կանաչեցեք,
 Իմ յարին ճանաչեցեք,
 Ջա՛ն, մարա՛լ ջան,
 Իմ յարին ճանաչեցեք,
 Վա՛յ, լե, լե, լե, լե,
 Վա՛յ, լե, լե, լե,
 Վա՛յ, լե, լե,
 Որ գա ձեր սուտովն անցնի,
 Շուտով ինձի կանչեցեք,
 Ջա՛ն, մարա՛լ ջան,
 Շուտով ինձի կանչեցեք,
 Վա՛յ, լե, լե, լե, լե,
 Վա՛յ, լե, լե, լե,
 Վա՛յ, լե, լե:

Սարե՛ր, ձորե՛ր, ե՛տ կացեք,
 Իմ յարին ճամփա բացեք,
 Յար յարի հետ խոսելիս
 Ականջ արեք, ինացեք:

8 ԿՈՂՈՏ ԷՐ, ԽՈՐՈՏ ԷՐ

Արագ, փայլուն
Allegro brillante $\text{♩} = 108$

S. *f*

Կո - լոտ եր, Կո - լոտ եր, յայ - Լի

Կո - լոտ եր, Կո - լոտ եր, յայ -

գյա - դեճ Կո - լոտ եր, յայ - Լի գյա - դեճ Կո - լոտ

Լի գյա - դեճ Կո - լոտ եր, յայ - Լի գյա - դեճ Կո - լոտ

եր, էճ ջան տը - դեճ խո - թոտ եր, էր

եր, էճ ջան տը - դեճ խո - թոտ եր, էր

Attacca № 9

9 ՂԱՇԱՆԳ Է

Անշտապ
Tranquillo $\text{♩} = 54$

Երագուն
sognando

Tenore solo

հատու - *p marcato* ղա-շանգ է, ղա-շանգ է

ղա-շանգ է, ղա-շանգ է. (Simile)

Մուղ - Գվա Լի - ճը Լո - դա - ցա, բաղ - Գվա շու-քից

շո - րա - ցա, յո - թը տա - րի հի - վանդ - ցա,

յա - րիս տե - սա՛ Լա - վա - ցա, յո - թը տա - րի

poco allarg. *a tempo* *rit.*

հի - վանդ - ցա, յա - րիս տե - սա՛ Լա - վա - ցա:

10 ՄԵՌՆԻ ՍԱՌՐԻՒՆՈՐԴԻՆ

Դանդաղ, խորունկ վեճով
Largo, con profondo dolore (♩=104)

p

S. *Մեռ-ցի սա - բը - բի որ - դից, Խե - չո, տա - րան*

A.

Մա - րո - ին, սա - րեր, ա՛յ, քար - քանդ սա - րեր...

espress. cresc. dim. mp cresc.

Ա - թե՛վ ցոլ ա - լավ գը - ցաց, ա՛մ-պից դեմ ե -

dim. f

լավ գը - ցաց, հա - լալ թո - ղու - թյուն չա - ուի.

p unisono D. C. Più largo



սիր-տըս Գի - գյա - րա մը - Գաց: Մեռ - ցի սա - բը -



- բի որ - դիճ. Խե - չո, տա - րան Մա - րո -



- ին, սա - րեր, ա՛յ, քար - քանդ սա - րեր...

Մեռնի՛ սաբբբի որդին,
Խեչո, տարա՛ն Մարոյին,
Սարե՛ր, ա՛յ քարքանդ սարեր...

Արև ցոլ արավ գնաց,
Անպին դեմ ելավ գնաց,
Հալավ թողութուն չառի,
Սիրոս սիգյարան մնաց:

Ջաղացի դուռը չիման,
Չկա աղբոր իման,
Քրոջը քաջին տարան,
Մի բերան չարեց շիվան:

Խեչոն գնաց Բայապեղ,—
Թուրը դուպավ բուլապեղ:
Ա՛յ սարեր, սարեր սարեր,
Քարքանդ ընեք բնավեր:

Մեռնի՛ սաբբբի որդին,
Խեչո, տարա՛ն Մարոյին,
Սարե՛ր, ա՛յ քարքանդ սարեր...

11 ԵՂՍՈ ՁԱՆ

Աւելույժ
Vivo ♩=116

Կատակարար
scherzando

p *f*

S. Ա - թի գը-նանք մեր տու - նը . տես, եղ - սո ջան.
A. Հո՛ւյ, հո՛ւյ, հո՛ւյ, հո՛ւյ, եղ . - սո ջան.

p *cresc. sempre*

T. ղանդ ու շա-քար կոտ-րեմ ու-տես եղ - սո ջան, հո - գի ջան,
B. ղանդ ու շա - քար եղ - սո ջան, հո - գի ջան.

f *p* 1.2.3. *f* Coda

S. սե-վուկ ա - չեր, եղ - սո ջան, քեզ ղուր-բան: քեզ ղուր-բան:
A. սե - վուկ ա - չեր, քեզ ղուր-բան: քեզ ղուր-բան:

Արի գնանք մեր տունը տես,
Եղսո ջան,
Դանդ ու շաքար կոտրեմ ուտես,
Եղսո ջան,
Հոգի ջան,
Սևուկ աչեր եղսո ջան,
Քեզ ղուրբան:

Ման ես գալիս քուչա-քուչա,
Պոպոկ տվիր՝ մեջը փուչ ա:

Ման ես գալիս յանա-յանա,
Կարմիր թշեր, սպիտակ չանա:

Երևանու եկավ համեմ,
Սիրող սրտիս մեջը քամեմ:

12 ՀՈՎ ԱՐԵՔ, ՍԱՐԵՐ ԶԱՆ

Ծանր
Grave
mp ♩=66

Tenori

Հով ա - րեք: սա - րեր ջան, հով ա - րեք, իմ դար -

I Bassi

Հով ա - րեք, սա - րեր ջան, հով ա - րեք, իմ դար -

II

mf un poco animato

- դին դար-ման ա - րեք: Սա - րե - րը հով չեն ա -

mf

- դին դար-ման ա - րեք: Սա - րե - րը հով չեն ա -

mf

Սա - րեր, հով

a tempo mp

- ցում, սա - րե - րը հով չեն ա - ցում, իմ դար -

mp

- ցում սա - րե - րը հով չեն ա - ցում իմ դար -

mp

չեն ա - ցում,

դից դար - ման ա - - նում, իմ դար - - դից դար-ման ա - - նում:

դից դար - ման ա - - նում, իմ դար - - դից դար-ման ա - - նում:

դից դար - ման ա - - նում, իմ դար - - դից դար-ման ա - - նում:

Poco piu animato
cresc.

Ամ - պե՛ր, ամ - պե՛ր, թի քիչ զով ա - - րեք, վա-րար աճճ - րեվ թա - փեք

Ամ - պե՛ր, մի քիչ զով ա - - րեք, վա - - րար աճճ րեվ

Ամ - պե՛ր, զով ծով ա

dim. rit. a tempo p

ծով ա րեք, գեշ մար - դու օր ա - - րե - - վը

ծով ա - - րեք, գեշ մար - դու օր ա - - րե - - վը

- րեք.

Coda

pp sempre ben tenuto:

սեվ հո - ղի տա - կով ա - րեք: Հով ա - րեք, սա - րեր ջան,
սեվ հո - ղի տա - կով ա - րեք: Հով ա - րեք, սա - րեր ջան,
սեվ հո - ղի տա - կով ա - րեք: Հով ա - րեք, սա - րեր ջան,

ritardando:

հով ա - րեք, իմ դար - դին դար-ման ա - րեք:
հով ա - րեք, իմ դար - դին դար-ման ա - րեք:
հով ա - րեք, իմ դար - դին դար-ման ա - րեք:

Հով արեք, սարե՛ր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք:—
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ կով արեք,
Վարար անձրև թափեք, ծով առեք,
Գեջ մարդու օր արևը
Սև հողի տակով արեք:

Հով արեք, ամպե՛ր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք:—
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրներ,
Մի վեր կացեք իմացեք,
Տեսեք իմ սրտի ցավեր:

Հով արեք, սարե՛ր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք:

13 ԲԵՐԴԻՅՉ ԴՈՒՐՍ ԵԼԸ ԱԼԱԳՅԱԶ ՏԵՍԸ

Ազատ, պատմելով
Liberamente $\text{♩} = 92$

mf con moto *poco cresc.* *rall. molto*

Tenori
Բեր-դի-ցը դուրս ե-լա Ա-լա-գյազ տե-սա, խա-

I
p
Ա - - - - - լա - գյազ տե-սա, խա -

Bassi
p
Ա - - - - - լա - - - - - գյազ տե-սա, խա -

II
p
Ա - - - - - լա - - - - - գյազ տե-սա, խա -

dim. *a tempo* *mf*

- ցում ե-վա ջան, ա-րա-րած աշ-խարհը դը-րախ -

- ցում ե-վա ջան, դը - - - - - րախ -

- ցում ե-վա ջան, դը - - - - - րախ -

rall. molto $\text{♩} = 56$ *mp*

- տի պես ա, խա-ցում ե-վա ջան: Դուն կե-ցիր բա -

- տի պես ա, խա-ցում ե-վա ջան: Դուն կե-ցիր բա -

- տի պես ա, խա-ցում ե-վա ջան: Դուն բա -

- ըով, ես կեր-թամ լա - լով,

- ըով, ես կեր-թամ լա - լով,

- ըով, ես լա - - - լով,

լա լով ող - բա - լով, սա - ըեր ման գա -

լա - լով ող - բա - լով, սա - ըեր ման գա -

ող - բա - - լով, ման գա -

Tempo I *mf* rall. molto

- լով: Ա - պա - ըան աչ - քիս դու- ման ա

- լով: Ա - պա - ըան դու- - ման ա

p

- լով: Դու - - - ման ա

a tempo

rall. molto

դա - ռել, իմ կյանքն ու ա - թել յա ման աս
 դա - ռել, իմ կյան - քը յա - ման աս
 դա - ռել, յա - ման աս

$\text{♩} = 60$
mf - mp

դա - ռել: Օ - թեր, գար - նան աս - նուշ օ - թեր.
 դա - ռել: Օ - թեր, գար - նան աս - նուշ օ - թեր.
 դա - ռել: Օ - թեր աս - նուշ

mp - p *p - pp*
 աս'խ, ո՛ւր եք կո - ռել:
mp - p *p - pp*
 աս'խ, ո՛ւր եք կո - ռել:
mp - p *p - pp*
 ո՛ւր եք կո - ռել:

Քերդիցը դուրս ելա Ալազյայ տեսա,
 Խանում եվա ջան,
 Արարած աշխարհը դրախտի պես ա,
 Խանում եվա ջան,
 Դուն կեցիր բարով,
 Ես կերթամ լալով,
 Լալով ողբալով,
 Սարեր ման գալով:
 Ապարան աչքիս դուման ա դառել,
 Իմ կյանքն ու արև յաման ա դառել:
 Օրեր գարնան, անուշ օրեր,
 Ախ, ո՛ր եք կորեր:

Ոջխարն ետին կարծա, էնդին՝ գառները,
 Խանում եվա ջան,
 Կանաչել են ծաղիկները, ծառները,
 Խանում եվա ջան,
 Դուն կեցիր բարով,
 Ես կերթամ լալով,
 Լալով ողբալով,
 Քոչ ու բարխանով:
 Արի գնանք թո ման եկած արտերը,
 Քեզ որ տեսա նորացան իմ դարդերը:
 Օրեր գարնան, անուշ օրեր,
 Ախ, ո՛ր եք կորեր:

14 ԵԼԱ ԵՐԴԻԿ

Աշխույժ կատակով
Vivo scherzando ♩ = 116

f *p*

T. *f* *p*

Ե-լա եր-դիկ թափ քե - լե-ցի, ջա - ցի-ման, ջա - ցի-ման,
 ոտ-քով զար-կի եր - դիկ բա-ցի, ջա - ցի-ման, ջա - ցի-ման,

B.

mf ritardando a tempo

յա-րըս տուն չէր՝ ցըս -- տա. լա-ցի, յար. ջա - ցի - ման. ջա - ցի - ման,

B.

չի - ցար բո-յիդ ես ղուր - բան, ջա - ցի-ման, ջա - ցի - ման,

B.

1,2,3,4. *5.f*

սեվ ա - չե - բուր ես ղուր - բան: ես ղուր-բան:

B.

Ելա երդիկ թափ քելցի,
 Զանիման, ջանիման,
 Ոտքով վարկի երդիկ բացի,
 Զանիման, ջանիման,
 Յարս տուն չէր, նստա լացի,
 Զանիման, ջանիման,
 Չինար բոյիդ ես դուրբան,
 Զանիման, ջանիման,
 Սև աչքերուդ ես դուրբան:

Գիշերն անքուն ես մնացի,
 Երազ տեսա՝ ծովուն կացի,
 Կռնկու սար ուխտ գնացի:

Դու հուստ կիգաս, դու Խլաթա,
 Բռչոր իրես՝ լմանի գաթա,
 Պագիկ մի տուր տամ դուլաթա:

Դու հուստ կիգաս, դու Խազեղու,
 Դու կու քելիս ինչ օր մեղու,
 Պագիկ մի տուր տանիմ դեղու:

Արի երթանք Կռնկու սար,
 Բերդ մի շինենք մտնենք խսար,
Քաղաքի ժողովրդականացած երգ է: Կատարելիս հնարավոր է կցել նախորդին՝ որպես շարքի միջին մաս, որից հետո կրկնել նախորդը («Բողբարձր»): Հնարավոր է նաև նախորդ և հաջորդ երկու երգերի հետ կապել չորս երգերի շարք (մյուս երեքը գուսանական են):

Մշակել է նաև որպես մեներգ (տես էջ 109)

5. Ծամերդ, ծամերդ. Կոմիտասից ստացած ձայնագրություններից է: 10/29 և 27/29: Առաջինն ավելի մշակված բնագիր է: Կրկներգի սկզբում փորձել է պոսի ներգամասն առանձնացնել, բայց կիսատ է թողել: Տպագրվում է 10/29-ից:

Երգը պատկանում է աշուղ Թալալին (19-րդ դ. 2-րդ կես): Ընդարձակ տեքստը գետնելված է Աղ. Մխիթարյանի «Տաղեր և խաղեր»-ում: Բնագրում խոսքերից գրված են 1-ին տողը և կրկնակը: Այստեղ լրացված է «Ժողովրդական խաղիկներ»-ից և Ա. Բրուսյանի ժողովածուից: Երգի 1-ին կեսում պոստերի և տենորների խոսքերը դասավորվում են այսպես.

Ծառի կարմիր վարդը,
Մարդ չգիտի դարդը.
Դու մի պատիր սերդ,
Ինձ համարիր տերդ:

6. Քո փափագով. Բնագիրը՝ 12/2ա: Ջիվանու տարածված երգերից է: Հետաքրքրական է, որ Կոմիտասն ևս դաշնակել է (վաղ մշակումներից): Ներկա հրատարակության համար այս երկարատև երգը հնարավոր միապաղատությունից դուրս բերելու նպատակով խմբագիրն ավելացրել է 9—10 տակտերի հակադրվող ֆրազը, վերցնելով այդ Ջի-

վանու հրատարակված երգից, և դաշնակը պահելով ըստ Եկմայանի մշակման մյուս տակտերի: Կատարված են խմբագրական այլ աննշան շտկումներ: Հնարավոր է կատարել նաև արական խմբով, ցած դիրքով, օրինակ՝ Սի-բենով մածորում: Ի տարբերություն կենցաղում արմատացած արագ, շուտասերուկային կատարման, երգի բովանդակության արտահայտչությունը չնվազեցնելու, այլ խորացնելու նպատակով առաջարկվում է սլն կատարել հանդարտ, ներքնապես հուզումնալից: Կարելի է որպես հանկերգ կցել նախորդ երգին կամ այս երկուսը միասին՝ նախորդ վոյզին: «Ջիվանու քնարը» ժողովածուում (1959, Երևան, կապեց և ծանոթագրեց Ա. Սահակյան) ասված է՝ «իբր սիրալին երգի մեջ հեղինակը սիրական բառի տակ նկատի ունի Հայաստանը»:

7. Բաղեր, դուք կանաչեցեք. Բնագիրը՝ 27/28: Կա նաև 29/3, դաշնամուրային շարադրություն, որտեղ 27/28-ի շարադրությունը կրկնված է և հետագա վարգացում ունի: Խոսքերից գրված են առաջին երկու տողը և կրկնակը: Լրացված է «Ջավախքի բուրմունք»-ից և «Հպար ու մի խաղ»-ից: Եկմայանի տեմպային նշումը՝ Allegro՝ հաշվի չի առնված: Հնարավոր է կատարել արական խմբով, ցած տոնում (օրինակ՝ սի-բենով մինոր):

8. 9. Կոլոտ էր, խորոտ էր. Ղաջանգ է. Երկու առանձին դաշնավորումներ են՝ 27/20 և 10/28, ուրվագծորեն շարադրված, երկու դեպքում էլ խոսքերը գրված են: Խմբագրելիս երկրորդ երգի արպեջոնները հարմարեցված են երկու ձայնի՝ բաս և բարիտոն: Կարճությունից խուսափելու համար երկրորդ երգը կարելի է կատարել առաջինին կից, դեռ ավելին՝ երկրորդից հետո առաջինը կարելի է կրկնել, իր նույն տոնում կամ մեկ տոն բարձր, և վերջապես, այս ձևով կատարվող երկու երգը կարելի է կցել «Բաղեր, դուք կանաչեցեք»-ին որպես հանկերգ.

10. Մեռնի սաբբի որդին. Եկմայանի թղթերում հայտնաբերվել են Կոմիտասից վերցրած միաձայն մեղեդին կրկներգի 2 տող խոսքով (21/1բ և 4) և դաշնամուրային մշակումը (30/4), որտեղ երգն ընդարձակված է: Երգչախմբային տարբերակը կապված է դաշնամուրային մշակումը խմբի վերածելու միջոցով (լիովին պահպանելով Եկմայանի հարմոնիան), այդ բարձրարժեք երգը և նրա մշակումը (որ դաշնամուրի համար առանձնապես շահեկան էլ չէ) չկորցնելու նպատակով:

Հայ գյուղական այս սուգ և անեծք հանդիսացող նշանավոր երգը իրական դեպքերի վրա է հիմնված: Այն ամենայն հավանականությամբ ներկայացնում է նախահեղափոխական Հայաստանում օտար պավթիզների վայրագ «ունօրինության» դժբազանքից մեկը (այսպիսի երգերում հաճախ եղելությունը պատմվում է առաջին դեմքով, նույնիսկ պոհված հերոսի անունից, որպես մի յուրահատուկ «ինքնակենսագրություն»): Այս երգի խոսքերը, երբեմն բավական շատ տներով, կան պանական երգարաններում, միշտ խառն ու աղավաղված վիճակում: Դժվար չէ, սակայն, կոտակել երգին հիմք կազմած իրադրությունը՝ գեղջկուհի Մարոյին առեվանգել են և նրա սիրած Խեչոյին սպանել: Հաշվի առնելով երգի երկարատևությունը, խոսքերից բերված են միայն 3 բնորոշ տուն, այդ նպատակի համար օգտվելով, մասնավորապես, նաև Կոմիտասի մի այլ ձայնագրությունից, Վետեղված նրա 325/174 ձեռագրում (3-րդ տունը):

11. Եղոտ ջան. Բնագիրը՝ 10/34, որ չնչին տարբերություններով գրված է նաև 27/29-ում: Խոսքեր չեն գրված, 10/57-ում կա միաձայն մեղեդին, վերնագրված՝ «Սիրահարական», 27/29-ում տեմպի նշում կա՝ Vivo: Բազմաձայն շարադրությունը որևէ կատարման մասնավորեցված չէ, դատելով երաժշտության բնույթից և տեմպից, կարող է հավասարապես հարմարվել թե՛ դաշնամուրալին, թե՛ երգչախմբային: Հաշվի առնելով այս եղանակի խիստ մոտիկությունը անցյալ դարավերջին և այս դարասկզբին մեծ տարածում գտած քաղաքային «Դու խոստացար ինձանից չպատվեիր» երգի մեղեդիին (մշակել է Աստոն Մայիսյանը) և երկու երգերի բովանդակության ընդհանուր նմանությունը («սիրահարական»), խմբագիրը ժողովրդական երգերի կանապան ժողովածուներից առնելով, այդ մեղեդիին հարմարեցրել է հայ ժողովրդական կատակերգերի մշտական հերոսուհիներից մեկի՝ Եղսոյի մասին բերված կատակային-սիրաբանական խոսքերը և Եկմայանի դաշնակունը հատկացրել է եռաձայն խմբի: «Եղինակի դաշնավորման մեջ, բացի տոնայնության փոխադրումից, որևէ փոփոխություն չի կատարված:

12. Հով արեք, սարեր ջան. Այս երգի ձայնագրման պատմությունը ևս հայտնի է. Արխիվում գտնվող Եկմայանի նամակում, գրված Ախալցխայի երաժշտության դասատու Պողոս Տեր-Կարապետյանին՝ (հավանաբար՝ իր նախկին աշակերտին) կարդում ենք. «Հարգելի պրն. Տեր-Կարապետյան... Մի

գործով դիմում եմ Ձեզ, հույս ունեմ կկատարեք: Ձեր Ախալցխայում երկու ժողովրդական երգեր երգվում են, կցանկանայի ունենալ. մինը «Հով արեք, սարեր ջան», մյուսը լավ չեմ հիշում, միայն գիտեմ, որ վերջանում է հետևյալ խոսքերով՝ «լալով ողբալով, սարեր ման գալով»: Այս երգերը կարող ենք գրել հայկականով ևս, իսկ եթե գրեք եվրոպականով, առաջին երգը 3/8 կամ 3/4, իսկ վերջինը 3/4, չափավոր չափով: Խնդրեմ գրեցեք այդ երգերի մասին հետևյալ տեղեկությունները, նախ՝ խմբով են երգում թե միայնակ, երկրորդ՝ արական խումբ է թե իգական, երրորդ՝ ունի սուր թե ոչ և ով է սկսում խումբը թե սոլիստը, չորրորդ՝ այս երգերը երգում են գործիքներով թե ոչ: Շատ կարելի է դուք ունիք ավելի հետաքրքրական ժողովրդական երգեր, խնդրեմ, շատ կպարտավորեցնեք, եթե ուղարկեք: Մնամ միշտ հարգող՝ Մ. Եկմայան: 1901, 3 հունիս» (Ձեռագիր № 88):

Ձայնագրությունը գտնում ենք 21/6-ում, գրված կոմիտասյան երգերից հետո և ի տարբերություն դրանց՝ մատիտով:

Ինչպես հայտնի է, «Հով արեք»-ը ձայնագրել և մշակել է նաև Կոմիտասը: Եկմայանի մեղեդին կոմիտասյանից տարբերվում է հատկապես միջին բաժիններով, Կոմիտասի մշակածն ամբողջությամբ ավելի բնորոշ է գեղջկականին, ավելի «դիատոն» է:

Մշակման բնագրերն են՝ 27:26 (կիսատ), 27/28 և 29/4, որոնց մեջ դաշնակը նույն է, շարադրվածքի կերպը փոքր-ինչ տարբեր: Վերջինը՝ թանաքով մաքուր գրված, որ ամենակատարյալն է, բերված է այս հատորում: Ոչ մի բնագրում երգչախմբի ձայնանուններ չեն նշված, առաջին երկուսում հավանաբար նկատի է առնված խառն խումբ (սուպրանո և այլ միասին՝ մայր մեղեդին), վերջինում՝ արական: Խոսքերն ևս չկան, այստեղ վերցված են Կոմիտասից: Երկրորդ անգամ երգելիս 25—32 տակտերում խոսքերը կրճատվում են այսպես.

Բաս 1-ին. Սարեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ վազող աղբյուրներ.
Բաս 2-րդ. Սարեր ու աղբյուրներ.

13. Բերդիցը դուրս ելա. Տե՛ս «Հով արեք»-ի ծանոթագրությունը: Այս երգի միաձայն գրվածքը չի գտնվել Եկմայանի թղթերում: Մշակման բնագրերն են՝ 27/27 սևագրությունը (խոսքերը կիսատ, ձայնանուններ նշված չեն), հաջորդ էջին սկսել է արտագրել, բայց չի ավարտել, և 29/3ա մաքուր գրվածը, ուր նույնպես ձայնանուններ չկան, իսկ pizz նշումը ենթադրել է տալիս, թե մտադիր է եղել



նույն դաշնակունը երգչախմբի հետ Կուգահեռ հատկացնել նաև նվագախմբին: Խոսքերը լրացված են «Հապար ու մի խաղ»-ից, 2-րդ անգամ երգելիս կրճատվում են հետևյալ ձևով.

Բաս 1-ին և 2-րդ. Էն դին գառները, խանում եվա ջան,

Կանաչ ծառերը, խանում եվա ջան.

Բաս 1-ին. Արի երթանք քո արտերը,
Տեսա՛ նորացան դարդերը.

Բաս 2-րդ. Երթանք արտերը,
Տեսա դարդերը.

Սա ևս տարածված, իրական դեպքերի վրա (ունի Աղեկի մասին) հորինված երգերից է:

14. Ելա երդիկ. Դաշնակունյան բնագրերն են՝ 10/30 և 27/29ա: Ոչ մեկում ձայնանուններ չեն նշված, երգչախմբին հատկացված լինելը հասկացվում է 10/30-ում գրված խոսքերից: Այս տարբերակը հարմար տոնայնության մեջ դնելով խմբագիրը հատկացրել է արական երկձայն խմբի: Նույնը հնարավոր է կախարել իգական և խառն երկձայն խմբերով: Խոսքերը լրացված են «Ժողովրդական խաղիկներ»-ից և Ս. Դեմուրյանի «Քնար» ժողովածուից:

15. Ղարիբ եմ. Բնագիրն է՝ 29/9ա. Թեև ձայնանուններ և խոսքեր չկան, բայց շարադրությունից պարզ երևում է, որ խմբերգային է, սկզբում կանանց, հետո՝ խառն խմբով: Դեռ ավելին՝ վերջին տան վերջին հատվածը օկտավա ցած գրելով, Եկմաչանը հատուկ նշում է արել (հավանաբար՝ իր հիշելու համար), որ ոչ թե նվագելու, այլ դա ևս երգելու է (հետևաբար՝ արական խմբի հատկացված): Վերնագիրը դրված չէ: Հաջողվեց նույն եղանակը գտնել Կոմիտասի № 325 ժողովածուում, որտեղ գրված խոսքերն են՝ «Ղարիբ եմ, տեղս քար ա», իսկ դա հիմք տվեց խոսքը լրացնելու: Ուրեմն, խոսքերը գտնելու համար օգտագործված են՝ Կոմիտասի

№ 325 ձեռագիրը, «Հապար ու մի խաղ»-ը, Բրուսյանի «Ռամկական մրմունջներ»-ը և այլ աղբյուրներ:

Իր մեղեդիով և ընդհանուր դրամատիկ բնույթով այս երգը հիշեցնում է Կոմիտասի «Ծիրանի ծառ»-ը:

16. Սիրունիկ. Բնագիրը՝ 12/2ա, երկու տարբերակ, երկրորդում չափը ուղղված: Չայների նշումը՝ միայնակ տենոր և բասեր՝ հեղինակինն են, իր տեսակի նշումն է՝ Allegro և Allegro vivo, խոսք և վերնագիր չկան գրված: Հին Գյումրիի տիպիկ պարերգերից է, որ կանաչական խոսքերով է երգվում: Կոմիտասի «Ազգագրական ժողովածու»-ում ինչպես նաև՝ Էջմիածնի ձեմարանի ուսանողների մի ձեռագիր երգարանում կա այս եղանակի տարբերակ, իստոնացիոն կառուցվածքով շատ նման Եկմաչյանի մշակածին, բայց երգային-պատմողական բնույթի: Խոսքերը կապված են զինվորագրության հետ՝

Որդին ասաց. «Մնաս բարով, իմ մայրիկ,
Ես կերել եմ ծծիդ կաթը անապակ...»

Այս խոսքերն իրենց բովանդակությամբ ու տրամադրությամբ չեն հարմարում Եկմաչյանի մշակած եղանակին (որտեղ շուրջպարային բնույթը միանգամայն ակնհայտ է), ոչ էլ՝ նրա տեսակային նշումներին: Կոմիտասի 325/196 ժողովածուում գտնելով նման բնույթի և կառուցվածքի (երեք ֆրազից կազմված նախադասություններով) պարերգ, և այնտեղ եղած մեկ տուն խոսքը որպես 1-ին տուն օգտագործելով, խմբագիրը մյուս տները հարմարեցրել է «Ժողովրդական խաղիկներ»-ից:

17. ձախարակ. 10/70 և 71-ում կա միաձայն երգի Եկմաչյանի գրանցման երկու տարբերակ, որոնք բերվում են մեղեդիի նրա իսկ խմբագրած տարբերակի հետ համեմատության ներկայացնելու նպատակով:



10/47-ում ներդաշնակումն է: Խմբագրելիս հեղինակը կանոնավորել է երգի մետրը, մեղեդիական որոշ մանրամասներ դուրս է հանել: Այս ներդաշնակումն արտագրված է նախ՝ 10/62-ում, հետո՝ 29/4ա-ում: Մետրի մեղեդիական ընթացքի այս կանոնավորումների հետևանքով եղանակի ձևը դարձել է քառակուսի, ինչ-որ չափով խաթարվել է նրա բնական երգային ընթացքը և տուժել նրա պարզ անմիջականությունը: Չնայած դրան, Եկմայանի խմբագրած մեղեդին գեղարվեստական մեծ պոտենցիալ է կրում իր մեջ:

27/17-ում մաքրագրված է սկզբնական՝ 10/47-ի ներդաշնակման տարբերակը: Այստեղ այն վերնագրված է եղել «Колыбельная» («Օրորոցային»), հետո այդ վերնագիրը խափել և գրել է՝ «Прялка» («Ճախարակ»): Խոսքեր չկան, երգչախմբի ձայնանուններ նշված չեն, երգի բոլոր նախատակտերը ակորդ չունեն: Հավանական է ենթադրել, որ մի երկու այլ մշակումների նման, այս էլ հատկացված է դաշնամուրային կամ որևէ այլ գործիքային կատարման, կերպարային նոր մեկնաբանությունն ևս («Օրորոցային») կարող է արդարացվել անխոսք կատարվելու դեպքում միայն: Սակայն, հնարավոր է ենթադրել նաև, որ հեղինակը հին վերնագիրը վերականգնել է գործիքային կատարման հատկացնելու մտադրությունից հրաժարվելու պատճառով:

Անկախ այդ ենթադրություններից, նկատի առնելով ժողորդական այս ստեղծագործության և դրա եկմայանական դաշնավորման վառ երգային բնույթը, ներդաշնակումն այստեղ նույնությամբ վերաշարադրված է քառաձայն երգչախմբի համար, նախատակտերում ալիեացված են համապատասխան ֆրազների սկզբնական ակորդները: Խոր հուզականությամբ օժտված այս խմբերգն անհրաժեշտ է կատարել poco rubato, տեմպն ու հնչերանգը խոսքերի բովանդակության և տրամադրության համեմատ փոփոխելով (տես այդ մասին հատորի նախաբանը):

18. Լուսնակն անուշ. Միաձայն երգը Կոմիտասի՝ Եկմայանին հանձնած ձայնագրություններից է՝ 21/4, մեկ տուն գրված հետևյալ խոսքերով.

Լուսնակ գիշեր՝ հովն անուշ,
 Վայ, լե, լե, լե, լե,
 Լե, լե, լե, լե, լե,
 Կարմիր թշեր՝ պազն անուշ,
 Կայնել ես քարին՝
 Չեն տուր քո յարին:

Մեղեդին որոշ տարբերություններ ունի Կոմիտասի՝ հետագայում մշակած տարբերակներից (տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 2, նույն երգի ծանոթագրությունը):

Դաշնակման բնագրում (22/6ա) խոսքերը և խմբի ձայնանունները գրված չեն, սակայն շարադրությունից միանգամայն պարզ է, որ երգը հատկացված է արական խմբի, դաշնամուրի նվագակցությամբ: Քանի որ այս երգի խոսքերը ժողովրդի մեջ գոյություն ունեն իրենց ամբողջությամբ (թեև որոշ տարբերակներով) և այդ ամբողջությունը գեղարվեստական բարձր արժեք է ներկայացնում, հարմար գտնվեց Կոմիտասի օրինակով հրաժարվել «Լուսնակ գիշեր» տարբերակից և հատուրում պետեղել իսկական խոսքերը:

19. 20. Վարդ եմ քաղել և Անձրևն եկավ. Միևնույն երգի մշակման տարբերակներ են: Բնագրերը՝ 8/1, 10/39, 10/40, 10/57 (միաձայն մեղեդին և մեկ տուն խոսք), 27/17ա, 30/9ա, 42/10ա (խըմբերգի բասի երգամասը): Չետեղվում են՝ ա. 10/39 և բ. 8/1: Երկրորդում վանապանության համար օգտագործված են Կոմիտասի մշակումից ավանդական դարձած «Անձրևն եկավ» խոսքերը: Նույնպես ավանդական մեղեդիի համեմատությամբ հետաքրքրական տարբերությունը նախափերջին տակտի երկու ութերորդականներն են, փոխանակ այդ տեղի համար սովորական մեկ քառորդի: Վերը

թված բոլոր բնագրերում, ներառյալ միաձայն մեղեդին, այդ տեղն այդպես է: Ինչպես գրեթե միշտ, ձայնանունները նշված չեն: Ա տարբերակը հնարավոր է կատարել նաև իգական խմբով, ինչպես և Բ տարբերակը՝ միայն իգական կամ միայն արական խմբով: Ա տարբերակի խոսքերն այստեղ լրացված են գոյություն ունեցող ժողովածուներից:

21. **Չեմ կրնա խաղա.** Դաշնակման լերկու տարբերակ կա՝ 22/5, 30/5, 30/6՝ դաշնամուրային սպաստ շարադրություն, և 29/1ա՝ դաշնամուրի նվագակցությամբ երգի և պարի հատկացված շարադրություն, թեև լերգային մասը բնագրում առանձին տողի չի գրված և խոսքերն էլ չկան: Այս վերջինը, որտեղ դաշնակը միանգամայն երգելի է, պետք է հատրում: Շարադրությունն արտաքուստ փոխված է և փոխադրված հարմար տոնայնություն: Այս կամակցությամբ դաշնամուրի մասում կատարված են որոշ օկտավային լրացումներ: Օգտագործված են հին, ամենատարածված խոսքերը:

22. **Չունա կունա էր.** 10/37— պարզագույն դաշնակում դաշնամուրի համար, դրա տարբերակները՝ 10/42—44: 10/63— դաշնակման ուրվագիծ՝ խմբի, գուցե և խմբի ու դաշնամուրի համար, խոսքը մեկ տուն գրված: Այստեղ առանձին նշված է հետևյալ կանոնը.

են խմբագրական շտկումներ և կրճատումներ, խոսքերը լրացված են Կոմիտասի դասական դարձած խմբագրումից («Հապար ու մի խաղ»):

23. **Ծամթել.** 10/23-ում հիմնական դաշնակումն է, որ մյուս բոլոր բնագրերում կրկնվում է: Ինչպես մի քանի այլ դեպքերում, շարադրությունը կարող է հարմարվել թե՛ զուտ դաշնամուրային, և թե՛ միաձայն երգի համար դաշնամուրի նվագակցությամբ, որի մեջ ամբողջությամբ կրկնված է մայր մեղեդին: Այս վերջին մեկնաբանության օգտին ասում է այն փաստը, որ 10/23-ում մեղեդիի տակ խոսքեր են գրված, իսկ 27/24 և 27/29 բնագրերում նախադասություններից մեկի մոտ նշված է ՕՈԱ, մյուսի մոտ՝ ՕՈ, այսինքն՝ գրված է որպես աղջկա և տղայի կուգերգ:

10/23 և 27/29 դաշնակումներն առանց նախաբանի և վերջաբանի են, 27/24 և 27/36՝ նվազ հետաքրքրական նախաբան և վերջաբան ունեն: Այն տեսակետից ամենից ավելի շահեկան 29/6ա տարբերակը պետք է հատրում: Մեներգի մասը բնագրում առանձին տողի վրա չի գրված, այստեղ առանձին դուրս գրեցինք, խոսքերը վերցված են երգարաններից: Երգը կարող են կատարել նաև արական և իգական միաձայն խմբեր: Անշուշտ, կարող է նաև նվագվել որպես դաշնամուրային պիես:



որ օգտագործված է 9/8 տարբերակում: 27/17ա և 27/26ա— մեներգիչ, խումբ և դաշնամուր— պարզագույն դաշնակումներ են: Այս բոլորից համեմատաբար կատարյալ են՝ 9/3, 7, 8, և 14՝ մեներգիչ, խումբ և դաշնամուր (հնարավոր է նվագախումբ): 9/7-ը ամենից ավարտունն է: 9/8-ը ավելի ընդարձակ է, թեև միապաղաղ, էական տարբերությունը նախորդից այն է, որ պոլիֆոնիայի տարրերով համեմատաբար հարուստ է: Այս հատրում պետք է 9/7-ի տարբերակը, խմբի մասնակցության մասին նշումները վերցված են 9/8-ից: Կատարված

24. **Ծաղիկ ասեմ ու շարեմ.** Բնագիրն է՝ 8/3, անվերնագիր, խոսք գրված չէ: «Ջան ծաղիկ» կրկներգային դարձվածքները բնագրում խառն խմբի համար են: Երգն ամբողջությամբ միայն աղջիկների խմբով կատարելու հնարավորությունը ցույց տալու նպատակով (այսպիսի կատարումն, անկասկած, ավելի գործնական է) տենորի և բասի ֆրավները տրված են 1-ին և 2-րդ արտերին, դըժվարություն չէ նույնը կատարել և խառը խմբով: Տպագրվում է նվագակցության մասի կրճատումներով, խոսքերը խմբագրված են երգարաններում առաջ ներկայացված մանկներից:

25. Նանու դարդեր. Կան երկու կիսատ շարադրություն (20 և 28/18) և չորս լրիվ, առանձին թղթերի վրա մաքուր արտագրված շարադրություն՝ 13/1-ից մինչև 8 էջը: Այս չորսից երեքը ֆա մինոր են, մեկը՝ ֆա-դիեյ մինոր: Առաջին երկուսը վերնագրված են ժողովրդական երգ, վերջին երեքը կրում են Եկմայանի ստորագրությունը: Առաջինը սկզբից մինչև վերջ հատկացված է երգի, դաշնամուրի նվագակցությամբ, երկրորդում մի քանի հատված երգում է միայնակ սուպրանոն, երրորդում՝ նույն հատվածները նշված են՝ միայնակ սուպրանո կամ տենոր, չորրորդում՝ միայնակ բարիտոն (հավանաբար նկատի է ունեցել որոշակի երգիչների): Բուն ներդաշնակության մեջ տարբերությունները չնչին են, մասնավորապես՝ 3-րդում հանել է 2-րդի մեջ եղող երգիչների լուծության 4 տակտեր: Այստեղ պետեղվել է 3-րդը (13/5—6): Հետևելով հեղինակի խմբագրության սկզբունքին, տպագրվող տարբերակից հանված են խմբի լուծության էլի 2 երկտակտեր և երկու նախադասությունների հավելյալ կըրկություններ: Տեմպի, երանգների, խմբի կապի և նվագակցության նշումները հեղինակին են: Խոսքերում կատարված են խմբագրական փոփոխություններ և որոշ լրացումներ:

26. Քելե, քելե, քելջով աղջիկ. Կոմիտասից ըստացած ձայնագրություններից է (21/3), հին սևաթանաք գրված մեղեդիի վրա հետագայում մատիտով տակտի գծեր է նշանակել, երգի սկիզբը դեռելով 4/4 տակտի 2-րդ մասում: Այդպես միաձայն մեղեդին սկսված է նաև 42/10-ում: Դաշնակման բնագրերում, սակայն, մետրական երկու այլ տարբերակ կա՝ մի դեպքում մեղեդին սկսվում է տակտի 3-րդ, մյուս դեպքում՝ 4-րդ մասում, սխալ ջեշտեր է ստանում, և կատարումը դժվարանում է: Այստեղ պետեղելով, մետրական խմբագրությունը պահեցինք 21/4-ի և 42/10-ի նման: Երկու բնագրերում էլ խումբը գրված է առանձին տողերի վրա, 29/10-ում դա մինոր է և նախանվագ չկա, 14/1-ում սոլ մինոր է, նախանվագով: Ներկա տպագրությունը կատարվում է այդ երկուսի հիման վրա: Խոսքերը լրացված, խմբագրված են:

27ա և 27բ. Մըր խոր պապկե գերեզման և Երթանք Ստանբոլ. 27/23-ում դաշնակման նախնական օրինակ է, ուղղումներով: 42/10-ում գրված է «Երթանք Ստանբոլ»-ի 1-ին ձայնը: 22/8-ում մինչև վերջ մաքուր սևաթանաք գրված է երկու երգը, խոսքերը գրված չեն, անվերնագիր է: Հետաքրքրական է Եկմայանի ձեռագրի վրա Ռոմանոս Մելիք-

յանի՝ «Ինձ համար անծանոթ երգ է, Tonus do-rius, (Բ ձայն)» մակագրությունը, որը վերաբերում է 1915 թվականին, երբ նա ցուցակագրում էր Եկմայանի ձեռագրերը. այս ցուցակում նա (էջ 5) դա նշված է որպես անծանոթ երգ:

Բնագրում նվագակցության մասին որևէ նշում չկա՝ դաշնամուրով է թե նվագախմբով (կապիտ): Անշուշտ, երկու ձևով էլ հնարավոր է կատարել: Նվագակցության որոշ տակտերի չափապահ սակավահնչյուն զինելը պետք չէ դիտել որպես թերագրություն, այդ տեսակետից բնագրում պակասներ չկան, հենց ադպես էլ մտածված է: Խմբական մասը առանձին նվագակցություն չունի:

Հայ ժողովրդական, սոցիալական ցայտուն թեմա ունեցող այս երկու նշանավոր երգերը ժողովրդի մեջ էլ գոյակցում են, ընդ որում, երրորդ երգը կամ հաջորդում է առաջին երգի ամեն մի առանձին տանը, կամ կատարվում է առաջին երգը («Մըր խոր պապկե») ամբողջապես և վերջում որպես հորդորակ՝ երկրորդը («Երթանք Ստանբոլ» կամ «Ստանբոլ»): Եկմայանի մշակումն ևս կարելի է կատարել այդ երկու հնարավոր ձևերով: Խոսքերը այլպես տներով շատ ժողովածուներում են գրուելվում: Այստեղ բերվածը հիմնականում վերցված է Ս. Դեմուրյանի «Քնար»-ից (1907), որը բավական մոտիկից անդրադարձնում է Եկմայանի ժամանակի արևելահայ ժողովրդական երգը: Բառակազմի է-ն, ինչպես գյուղի ժողովրդական շատ երգերում պետք է արտասանել է: Տեմպն ու երանգանիշերը խմբագրի նշանակածն են:

28 ա և բ. Ահա, ծագեց կարմիր արև. Այլ կերպ կոչվում է Հասոյի երգը (Բաֆֆու «Կայծեր» վեպից): Չանապան տվյալներից երևում է, որ դեռևս անցյալ դարի վերջերին շատ տարածված է եղել հայկական դպրոցներում: Բնագրերն են՝ 10/6 (արական), 10/16 (խառն) և 10/76 (սոլ մաժոր, առաջինից այլ էական տարբերություն չունեցող արական խմբերգ): Տպագրվում են առաջին երկուսը: 10/76-ում խոսքերը մեկ տուն գրված են, այստեղ բերված է լրիվ:

29. Չարթիր, որդյակ. Անցյալում լայնորեն տարածված հայրենասիրական երգերից է, մեղեդին գոյություն ունի այլևայլ տարբերակներով: Երգն ունի պատմական նշանակություն, որպես հայ ազգային ապստամբական պայքարի՝ երաժշտության մեջ գտած անդրադարձման երևույթներից մեկը, որ արժանացել է Եկմայանի ուշադրությանը: Բնագրերն են՝ 10/70 — միաձայն մեղեդին և խոսքը, 10/72

ներդաշնակումը և խոսքը: Չանապան երգարաններում այս երգն ունի բազմաթիվ տներ:

30. <Նուռ եմ քեզմե: Անցյալում տարածված հայրենասիրական երգերից է, անդրադարձնում է հայրենիքից հեռացած պանդխտի ապրումները: 10/66-ում միաձայն երգը մեկ տուն խոսքով, 10/65 և 71-ում ներդաշնակումն է առանց խոսքի: Երգարաններում այս երգն ունի բազմաթիվ, սակայն անարվեստ տներ: Բերված տները երգելիս 1-ին նախադասության մեջ տներների և բասերի խոսքերը կրճատվում են այսպես.

<Նուռ, օտար երկրի մեջ,
Ե՛րբ կուգան գարուն, վարդեր,
Սարեր հագեր են կանաչ,
Իմ տուն Եփրատի ափին:

31. Երգ մեռնող հայրենասերի. Սմբատ Շահափիյի ոտանավորով ստեղծված, անցյալում լայնորեն տարածված հայրենասիրական երգերից մեկը, որ նախորդ երկուսի նման ունի պատմական հետաքրքրականություն: Բնագիրը՝ 10/27: Այստեղ չափն ուղղված է:

32. Կրիկիա. 21/10-ում գրաված է միաձայն երգը, որից հետագա մշակումները չեն տարբերվելու ո՛չ տրոնայնությամբ, ո՛չ բարձր դիրքով և գրեթե ո՛չ էլ մեղեդիական կառուցվածքով: Այս ձայնագրությունը իրականացված է 1898-ից առաջ, բայց 1895-ից հետո: 30/9— երգչախմբային ներդաշնակման սկզբնական ուրվագիծն է, լյա մինոր (պետք է ենթադրել՝ այդ տոնայնությունը պայմանական է եղել, ենթակա հետագայում փոփոխվելու, քանի որ բարձր դիրքի պատճառով կատարման համար անհնար է), նվագակցությամբ (հավանաբար նվագախմբային նախանվագ, միջնանվագներ, վերջնանվագ), սևագիր և անավարտ: 30/7— նախորդի փոքր-ինչ շարունակված տարբերակը: 9/1— նախորդների համեմատությամբ լրիվ գրվածք է: 10/8— առանց նվագակցության, փոքր-ինչ անավարտ ներդաշնակում, 42/15ա— 16— նոր ձևի նվագակցությամբ, որոշ չափով թերավարտ մշակում է: Այստեղ մեղեդին սկսվում է տակտի սկզբից:

Ներկա հրատարակության համար հիմք է վերցրած 42/15 ա—16 տարբերակը, նվագակցությունը դուրս է թողնված, մետրը ուղղված է մյուս բնագրերի նման, երգելի դարձնելու նպատակով տոնայնությունը փոխված է, այդ կապակցությամբ

կատարված են ձայների որոշ վերադասավորում և մանր հավելումներ: Թված խմբագրական շտկումների հետևանքով բնագրի բնույթը ոչ մի չափով չի փոխվել: Ներդաշնակումը թեև ոչ լիովին ավարտուն, հետաքրքրական է թե՛ նմանեցման (իմիտացիոն) պոլիֆոնիայով և այդ միջոցով տարբերանուններ պարունակող մեղեդիական գծեր միմյանց շահեկան ձևով հարկադրելով, և թե՛ բուն հարմոնիայով, որտեղ (ինչպես մի շարք այլ դեպքերում) պարզ պզգցվում է տերցիային ակորդներից խուսափելու և յուրօրինակ կվինտային հնչողություններ ստանալու ձգտում:

33. Թաղումն քաջորդվույն. 10/60-ում կա միաձայն մեղեդին՝ խոսքերով (մի մինոր, տակտի ըսկրպից սկսվող, վերջնականի համեմատությամբ մեղեդիական որոշ տարբերություններով): 15/1ա—2ա՝ ավարտված շարադրություն է, որին չնչին տարբերությամբ նման է «Նվեր իմ բարեկամ երաժշտասեր Ս՝ Մալխասյանին: Մ. Եկմայան. 1896, փետրվար 14» մակագրությունը կրող օրինակը, Գ. Լևոնյանի «Գեղարվեստ»-ում (№ 3, 1909) լուսանկար տպագրված: (15/1 թերթիկին գրված է նաև «Նորահրաշ»-ը որ նույնպես նվիրված է եղել Ս. Մալխասյանին և տպված է «Գեղարվեստ»-ում): Վերջապես, 87 թվով պահվում է «Ոչ փող պարկինք»-ի Միքայել Միրզոյանի արխիվից փոխադրված մի այլ բնագիր, «Մահ քաջորդվույն, խոսք Պեշիկթաշյանի, երաժշտություն՝ Մ. Եկմայանի» ինքնագիր մակագրությամբ, որ Մալխասյանին նվիրված օրինակի անմիջական սևագրությունն է: Ներկա հրատարակությունը հիմնված է այս վերջինի և «Գեղարվեստ»-ում տպագրվածի վրա, կատարված են տեխնիկական կարգի մանր հավելումներ:

34. Պլպույն Ավարայրի. Բնագրերն են՝ 17/1, «Ներդաշնակեց Մ. Եկմայան» ինքագիր մակագրությամբ, լյա-բեմոլ մածոր, քառաձայն խառն խմբի համար. նույն է՝ 15/1-ում, իսկ 25/2ա-ում ֆա մածոր է: Բոլորն ավարտված, մաքրագիր շարադրություններ են: Տպագրվում է վերջինը: Նախապես տպագրված է «Թատրոն» հանդեսում (1899, № 2, էջ 28), քառաձայն խառն խմբի համար, դո մածոր:

35. Լեռն... խոսքերը Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» վիպատանության վերջաբանն են: Արխիվում միակ բնագիրը 25/1-ն է՝

երանգանիշերի տեսակետից մանրամասնորեն մը-
շակված շարադրությամբ: Վերնագրված է Mar-
cia funebre (Թաղման քայլերգ): Խմբական հաս-
վածների համար նվագակցություն չի գրված, հնա-
րավոր է, որ դաշնամուրը կրկնել է խմբերգային
մասը և այդպիսի դեպքում տեղի խնայողության
նպատակով այն առանձին չի գրվել: Տպագրվում է
վերոհիշյալ բնագրից:

36. Տեր, կեցո դու վ՛այս: Այլ կերպ կոչվել է
Ազգային օրհներգ: 10/11-ում թանաքով մաքուր
գրված է միայն խմբերգային հատվածը: 25/2-ում
ամբողջ թրգն է, խմբական մասը դարձյալ, ինչպես
«Լռեց...»-ում (տես այդ երգի ծանոթագրությունը)
առանձին նվագակցություն չունի գրված: Վերո-
հիշյալ բնագրից տպագրվում է խմբագրական մանր
փոփոխություններով:

37. Ով Վայոց աշխարհ. Նախապես «Ով Վայոց
աստված» խոսքերով, իրենից ներկայացրել է ա-
ղոթք: Վերջին տարիներս այն կատարողական պը-
րակտիկայում նոր կյանք ստացավ Ս. Տարոնցու
վերամշակած «Ով Վայոց աշխարհ» խոսքերով, և
հնչում է որպես Վայաստանին ու հայ ժողովրդին
ուղղված քնարերգական ձև: Բնագրերը՝ 17/3 և
87՝ նույնն են, վերջինը հեղինակային մակագրու-
թյուն ունի՝ «Երաժշտություն Ս. Եկմաղանի»: Տպա-
գրվում է մետրի թեթև խմբագրությամբ:

38—43. Ըար հայ ժողովրդական երգերի. Գըր-
ված է արական քառաձայն խմբի համար: Եկմաղ-
անի ղեկավարությամբ, ռուսական երգչախմբով,
կատարվել է 1889 թ. դեկտեմբերի 30-ին Պետեր-
բուրգի Մարիինյան թատրոնում տեղի հայ ուսանող-
ների կազմակերպած ազգային երեկոյին: Ըարն
ընդգրկում է՝

- Ողջույն տվեք,
- Յօթն օր, յոթ գիշեր և Մտեր ես էգին,
- Առավոտյան քաղցր և անուշ հովերն,
- Չայնը հնչեց Էրպրումից,
- Որո-մոլոր Կուրն էր գալիս,
- Կեցցե Չեթուն:

Դրանցից երկուսի՝ «Առավոտյան քաղցր և անուշ»
և «Չայնը հնչեց» միաձայն գրանցումները կան
№ 21 տետրում (էջ 7 և 11), երկու տետրի վերջին
երկու էջին կան՝ «Ողջույն տվեք» և «Յօթն օր, յոթ
գիշեր» խմբերգային դաշնակման փորձեր:

Միատեսակ թղթերի վրա գրված են այս երգա-
շարի պարտիտուրները և պարտիաները: № 16՝
պարտիտուրներն են: Սկզբնական տարբերակում

բոլոր երգերը, բացի ավարտական «Կեցցե Չե-
թուն»-ից, լրա-ում են սկսվում: Վավանաբար, ընդ-
հանուր տոնայնական միապաղաղությունից խու-
սափելու նպատակով առաջին երկու երգը մեկ տոն
իջեցված վիճակում նորից են գրված (16/1 և 2):
Այսպիսով՝ կոտրվել է միապաղաղությունը և շարն
սկսվում ու ավարտվում է նույն՝ սուլ տոնայնու-
թյան մեջ: Այս փոփոխությունը պարտիաներում ար-
ված չէ, գործնականորեն կարիքը չկար:

№ 28՝ պարտիաներն են: Պահպանված են՝
4-ական 1-ին, 2-րդ տենոր և 1-ին բաս, 3-ական 2-րդ
բաս: Բացի երկու պարտիայից, մնացած բոլորում
խոսքերը ռուսատառ հայերեն են: Երկուսի հաչա-
տառ խոսքերը գրված են Եկմաղանի ձեռքով: Ռու-
սապատերից մեկի խոսքերը նույնպես Եկմաղանի
ձեռքով է և կիսատ է թողնված, հավանաբար ձե-
ռագիրը վատ լինելու պատճառով: Մյուսները գըր-
ված են ուրիշի պարզ ձեռագրով, որը նմանություն
է տալիս Գեորգի Կապաչենկոյի ձեռագրին: Վեր-
ջինս այդ ժամանակ Մարիինյան թատրոնի խմբա-
վարն էր: Մի քանիսի վրա ներգողները (հավանա-
բար՝ Մարիինյան թատրոնի երգչախմբի արտիստ-
ներ) գրել են իրենց ազգանունները: Երկու հայա-
տառերից մեկը (1-ին բաս) երգել է նշանավոր հայ
երգիչ Բեգլար Աստվածատուրյան-Ամիրջանյանցը
(պարտիայի վրա դրոշմված է նրա անձնական կնի-
քը): Մյուսի վրա երգչի անուն չկա, բայց Եկմաղ-
անի ձեռքով գրված է՝ «Репетиция 1-ая завтра
28-го в 9 часов у меня и 29-го в Марининском
театре генеральная».

(«1-ին փորձ՝ վաղը 28-ին, երեկոյան ժամը 9-ին
ինձ մոտ, և 29-ին Մարիինյան թատրոնում գլխա-
վոր փորձ»):

Այդ ընդարձակ և դժվարին, միևնույն ժամա-
նակ լեզվով ու մեղեդիական ոճով երգիչներին ան-
ժանոթ ստեղծագործությունը երկու փորձով կատա-
րելը շատ հաջող չէր կարող ստացվել: Մամուկի
տվյալներով երգերն իրոք «անհաջող են երգվել»,
բայց ունկնդիրները, մասնավորապես քրիտասարդ
հայ ուսանողները «սաստիկ ծափահարել են»: Ջերմ
ընդունելությունը պետք է բացատրել կատարված
կյուրթի ազգային-հայրենասիրական՝ այն ժամանակ
հայ երիտասարդությանը խիստ հուզավառող բո-
վանդակությամբ:

Պարտիաները որոշ տվյալներ են պարունակում
նաև երգերի տեմպի և երանգանիշերի մասին, որ
նախապես գրված չեն եղել, բայց միայն փորձերի
ընթացքում են նշանակվել:

Երգաշարը հրատարակվում է հիշյալ ձեռագրե-
րից, պարտիտուրները և պարտիաները համե-
մատված են, մեկով մյուսը լրացված (խոսքերի
մասին տե՛ս հատորի նախաբանը):

«Կեցցե Չեյթուն»-ը պարտիաներում և պարտիտուրում տարբերություն ունի: Նախապես 2-րդ և 4-րդ ձայների համար գրելով ձգվող հնչյուններ, հետո, հավանաբար խոսքերը կրճատ շարադրելու դժվարության պատճառով հրաժարվել է այդ տարբերակից և պարտիաներում գրել է այն տարբերակը, որը համեմատաբար կատարյալ է և պետեղված է այստեղ:

Երգչախումբը կատարման ժամանակ նվագակցություն է ունեցել: Պարտիաներում առանձին երգերի սկզբից 2 կամ 4-ական տակտ պաուզաներ են դրված: Պարտիտուրներում, տեղ-տեղ, այս կամ այն երգի համար նշված է հարվածային գործիքների նվագակցության ռիթմը: «Կեցցե Չեյթուն»-ի համար վերջում դուրս է գրված պարտիտուրային հետևյալ հատվածը.

Бубен (Դափիրա) 2/4

М. барабан (Փ. թմբուկ) 2/4

Литавры (Լիտավրներ) 2/4

Тарелки (Մոնդաներ) 2/4

Б. барабан (Մ. թմբուկ) 4/4

Մյուս երգերի նվագակցությունն ավելի պարզ է եղել: Պետք է ներառել՝ հարվածային գործիքների ուղեկցությունը պզալի էֆեկտ է առաջ բերել, մասնավորապես՝ «Կեցցե Չեյթուն»-ը պետք է հնչեր և շարն ավարտվեր բարձր ոգեղնազվածությամբ:

44. Համեստ աղջիկ. 27/33-ում դաջնակման առաջին փորձերից մեկն է կամ առաջինը: Մտադրվել է ինքնուրույն հարմոնիկ նվագակցություն գրել, բայց հետո մեղեդին մտցրել է նվագակցության մեջ: Անավարտ է: Այստեղ էլ գոյացել է նախաբանի գաղափարը, որ իրենից ներկայացրել է երգի 2-րդ նախադասության սկզբից պարզացող ներկար բանվածք, փոքր-ինչ սենտիմենտալ բնույթի: Սույն նյութն էլ ծառայել է որպես վերջաբան: 14/2-ում նույնի ավարտված շարադրությունն է, վերջաբանի երկու տարբերակով: 22/7-ում ավարտված մաքրագրություն է, առանց նախաբանի և նոր վերջաբանով: 10/51-ում միայն մեղեդին է խոսքով, 10/41, 45, 46, 48 և 50 էջերում երգի գրեթե միշտ նույն դաջնակումը կա, 48 էջում նոր, կարճ և արտահայ-

տիչ նախաբանով և վերջաբանով: Ներկա հրատարակության համար օգտագործված են 22/7 և 10/48 բնագրերը:

45. Գիշեր-ցերեկ կհառաչեմ. Այս երգը ժողովրդի մեջ գոյություն ունի երեք տարբեր խոսքերով՝ «Անձուկք հայ մանկանց», «Առ սիրուհիս» և «Հայրիկ, հայրիկ»: Առաջին երկուսից մեկը մյուսի փոխադրությունն է, երրորդն ինքնուրույն հորինվածք է, հարմարեցված նույն եղանակին:

Եկմաչանի ժամանակ երեք ոտանավորն էլ հայտնի են եղել և նույն եղանակով երգվել են: Քանի որ նրա բնագրերից ոչ մեկում խոսքեր կամ վերնագիր չկան, դժվար է որոշել՝ ինչ խոսքեր է նկատի ունեցել: Գերադասությունը տրված է Ալ.

Սպենդիարյանի «Առ սիրուհիս» ռոմանսի միջոցով ներկայումս լայնորեն տարածված խոսքերին:

Մեներգի մշակման բնագրերն են՝ 27/34—35, որտեղ երեք անավարտ շարադրություն կա (ղրբանցից մեկում երգին առանձին տող է տրված) և 8/2-ը, որ համեմատաբար ավարտուն վիճակում է, թանաքով մաքուր գրված, երգն առանձին տողի վրա, հեղինակի որոշ ուղղումներով: Այս վերջինը խմբագրական որոշ շտկումներով պետեղված է հատորում:

46. Աղջիկ նապերով. Դաջնակման երկու տարբերակներից՝ առաջինը 10/21 և 14/2՝ դաջնամուրային թերի շարադրություն է, 14/2-ում վերնագրված՝ Ռոմանս, և երկրորդը՝ 22/1, 2, 30/1, 1ա՝ երգ և դաջնամուր, որոնց մեջ հեղինակը կտորել է մայր մեղեդիի կառուցվածքի քառակուսիությունը, և ղրբանում այն տարբերվում է խմբական մշակումից (էջ 17): Ներկա հրատարակությունը 22/2-ից է խմբագրական մի փոփոխությամբ՝ նվագակցության մեջ կրկնապատկվող մայր մեղեդին փոխադրված է

օկտավա ցած: Հեղինակային բոլոր օրինակներում խոյքերը գրված չեն: Բերվում են գոյություն ունեցող պանապան երգարաններից:

47. Միրուհիս, քեզ համար. Թատերական նրա-
ժրջանության մեջ ծնունդ առած «Աղջիկ դու սիրուն»
հորդորակով այս երգը, որ անցյալ դարավերջին
այնքան տարածված է եղել Թիֆլիսի հայության մեջ,
բնականաբար շատ կբաղեցրել է նաև Մ. Եկմայա-
նին: 9/4, 10/24, 26, 27, 32, 49, 60, 61, 26/12,
27/16— այս կամ այն չափով ավարտված դաշ-
նական բնագրեր են (10/49-ում գրված են մեկա-
կան տուն խոսքեր): Տպագրվում է № 26 ձեռագր-
րից, որտեղ ավարտված ներդաշնակումը գրված է
երկու օրինակ: Դրանցից մեկում հորդորակ երգի
համար նշված է հարվածային գործիքների նվա-
զակցության ռիթմ, հավանաբար, մտադիր է եղել
երգն հատկացնել ձայնի և նվագախմբի: Ըստ հեղի-

նակի նշման մեներգիչը ամենոր պետք է լինի: Ու-
շադրության արժանի է մեղեդիի լադային տարբե-
րությունը ներկայումս կենցաղում գոյություն ունե-
ցող և այլ հեղինակների մշակած տարբերակից:
Երգը տպագրվում է տեխնիկական որոշ խմբագրու-
մով:

48. Պաղ աղբյուրի մտը. Խոսքերը Ջիվանունն
են, եղանակը վերագրվում է նրան: Նախորդի
նման տարածված այս երգն ևս Եկմայանը մշակել,
դարձրել է ռոմանս: 30/5 և 22/3—5 բնագրերից
երկրորդը լրիվ ավարտված շարադրություն է, որոշ
թերություններով և վրիպակներով տպագրվել է
«Սովետական ալվեստ» ամսագրում (1956, № 3)
և Շարա Տայանի կապած գուսանական երգերի
ժողովածուում: Այստեղ տպագրվում է տեխնիկա-
կան մանր շտկումներով:

Ռ. ԱՔԱՅԱՆ

81891



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արվեստի ինստիտուտի կողմից	3
Խմբագրի կողմից	4
Մակար Եկմալյան (Կենսագրական ակնարկ Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ)	8

Խ Մ Բ Ե Ր Գ Ե Ր

1. Արագը հեշտացել ա	11
2. Սիրուն է	12
3. Բոյդ բարձր (ԱՇՈՒՂ ՄԻՍԿԻՆ)	14
4. Աղջիկ նազերով	17
5. Ծամերդ, ծամերդ (ԱՇՈՒՂ ԹԼԱԼԼ)	19
6. Զո փափագով (ԶԻՎԱՆԻ)	21
7. Բաղեր, դուք կունաչեցեք	23
8. Կոլոտ էր, խորոտ էր	25
9. Ղաշանգ է	25
10. Մեռնի սաբբի որդին	27
11. Եղստ ջան	29
12. Հով արեք, սարեր ջան	30
13. Բերդիցը դուրս ելա	33
14. Ելա երդիկ	37
15. Ղարիբ եմ	39
16. Սիրունիկ	41
17. Ճախարակ	42
18. Լուսնակն անուշ	44
19. Վարդ եմ քաղել	47
20. Անձրևն եկավ	49
21. Չեմ կրնա խաղա	52
22. Զոմա-զոմա էր	54
23. Ծամթել	58
24. Ծաղիկ ասեմ ու շարեմ	61
25. Նանու դարդեր	63
26. Զելե, քելե, քելքով աղջիկ	66
27 ա. Մըր խոր պապկե գերեզման	72
27 բ. Երթանք Ստանբուլ	74

28. Ահա ծագեց կարմիր արև (խոսք ԲԱՖՅՈՒ)	76
29. Ջարթիր, որդյակ (խոսք Պ. ՆԱԹԱՆՅԱՆԻ)	78
30. Հեռու եմ քեզմե (խոսք Գ. ՄՈՄՃՅԱՆԻ)	79
31. Երգ մեռնող հայրենասերի (խոսք Ս. ՇԱՀԱԶԻԶԻ)	80
32. Կիլիկիա (խոսք Ն. ՈՌԻՍԻՆՅԱՆԻ)	81
33. Թաղումն քաջորդվուն (խոսք Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ)	85
34. Պլպուլն ավարայրի (խոսք Ղ. ԱԼԻՇԱՆԻ)	89
35. Լռեց... (խոսք Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ)	90
36. Տեր, կեցո դու վհայս (խոսք ԹԱՂԻԱԴՅԱՆՑԻ)	93
37. Ո՛վ, Հայոց աշխարհ (խոսքի վերամշակումը Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)	94

38—43 Շ Ա Ր Կ Ա Յ Ժ Ռ Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ե Ր Ի

Ա) 38. Ողջուն տվեք	95
Բ) 39 ա) Յոթն օր, յոթ գիշեր	96
Գ) 39 բ) Մտեր ես էզին	96
Դ) 40. Առավոտյան քաղցր և անուշ հովերն (Պ. ՂԱՓԱՆՑԻ)	98
Ե) 41. Ձայնը հնչեց Էրպրումեն	100
Զ) 42. Ոլոր-մոլոր Կուրն էր գալիս (խոսք Ս. ԳՅՈՒԼՁԱԴՅԱՆՑԻ)	100
Է) 43. Կեցցե Ջեյթուն (խոսք Հ. ՉԱԶՐՅԱՆԻ)	102

Մ Ե Ն Ե Ր Գ Ե Ր

44. Համեստ աղջիկ	104
45. Գիշեր-ցերեկ կհառաչեմ	106
46. Աղջիկ նապերով	109
47. Սիրունիս	111
48. Պաղ աղբյուրի մոտը (ԶԻՎԱՆԻ)	115

Ծ Ա Ն Ո . Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր (Ռ. ԱԹԱՅԱՆԻ)	119
---	-----

Հրատ. խմբագիր՝ Լ. ԱՍՎԱԾԱՏՐՅԱՆ,
Նկարիչ՝ Ռ. ԲԵԴՐՈՍՅԱՆ,
Գեղ. խմբագիր՝ Օ. ԱՍԱՏՐՅԱՆ,
Տեխ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.

Գառվեր 119

Տիրած 5000

Հանձնված է արտադրության 27/VII 1970 թ. Ստորագրված է տպագրության 25 IX 1970 թ.:

Թուղթ 60X92^{1/2}: Հրատ. 14,5 մամ. — 1 ներդիր տպագր. 16,5 մամ.: Գինը 2 ս.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: